

Համաշխարհային Այս Անկայուն Եւ Անորոշ Միջավայրին Մէջ Մեզ Հարկաւոր Են Ամուր Ձիղեր Եւ Զսպուածութիւն. Փաշինեան

Տեղ-Կոռնիձոր հատուածին մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանապահներու տեղակայման կէտերու ճշգրտման ուղղութեամբ աշխատանքներուն շնորհիւ իրավիճակը որոշակիօրէն բարելաւուած է, մասնաւորապէս 12 քմ-էն 7քմ-ին մէջ տեղակայման կէտերը յստակացուած են, 5 քմ-ի վերաբերեալ աշխատանքները կը շարունակուին, յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան նիստի իր ելոյթին:

Վարչապետը յիշեցուց, որ նախորդ նիստին տեղեկացուցած է, որ ՀՀ-ն Լաչինի միջանցքին կապող նոր՝ Կոռնիձոր-Տեղ ավտոճանապարհի շահագործման յանձնելու բերումով տեղի պիտի ունենայ դէպի Լաչինի միջանցք երթուղիի փոփոխութիւն, որուն հետեւանքով Հայաստան-Ատրպէյճան սահմանի մօտ 12 քմ-անոց հատուածի պահպանութիւնը պէտք է ստանձնեն ՀՀ սահմանապահ զօրքերը: Պատճառը այն է, որ մինչեւ այդ սահմանի նշուած հատուածին անմիջական պահպանութիւն չէր իրականացուեր ոչ Հայաստանի, ոչ Ատրպէյճանի կողմէ՝ Լաչինի միջանցքի ժամանակաւոր երթուղին ապահովելու համար նախորդ տարի ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն:

«Եւ ահա, ինչպէս յայտնի է, սահմանի անմիջական պահպանութեան ստանձնման ժամանակ որոշակի ինդիքներ են յառաջացել, ինչի մասին տեղեկացրել էր ԱԱԾ-ն՝ ընդգծելով, որ երկու կողմերի տեղակայման ընթացքում ի յայտ են եկել քարտէզների տարբերութեղծումներ», ըսաւ Փաշինեան:

Վարչապետը վստահեցուց, որ հայկական կողմին տրամադրուածութիւնը եղած է ու կը շարունակէ մնալ մագլցումէն խուսափելու: Ան յոյս յայտնեց, որ տեղակայման կէտերու ճշգրտման աշխատանքները կ'իրականացուին կառուցողական միջոցառումներով:

«Համաշխարհային այս անկայուն եւ անորոշ միջավայրում հարկաւոր են ամուր ջիղեր եւ զսպուածութիւն, տարածաշրջանային իրավիճակը պայթեցնելու հարցում շահագրգիռ ուժերին տուրք չտալու համար: Ի հեճուկս բոլոր դժուարութիւնների՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը անյոգնել վերահաստատում է իր հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին», կառավարութեան նիստին ժամանակ ըսաւ Փաշինեան:

Լարուած Իրավիճակ Հայ-Ատրպէյճանական Սահմանին Թշնամին Կրակած Ե Տեղ Համայնքի Եւ Սոթքի Հանքավայրի Ուղղութեամբ. Երկու Կողմէն Կան Զոհեր Եւ Վիրաւորներ Հայաստան Կը Հերքէ Իրանական ԱԹՍներ Օգտագործելու Մասին Լուրերը

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան յայտնած են, որ Ապրիլ 11-ին՝ ժամը 16:00-ի սահմաններուն, Ատրպէյճանի Ձինուած Ուժերու ստորաբաժանումները կրակ բացած են Տեղ համայնքին ուղղութեամբ ճարտարապետական աշխատանքներ իրականացնող ՀՀ Ձինուած Ուժերու զինուորներուն ուղղութեամբ: Հայկական կողմը դիմած է պատասխան գործողութիւններու: Ատրպէյճանը նաեւ ականանետեր կիրառած է հայկական դիրքերու ուղղութեամբ, իսկ հայկական կողմը դիմած է անհրաժեշտ պաշտպանական գործողութիւններու:

Ատրպէյճանի զինուած ուժերը կրակած են նաեւ հայ-ատրպէյճանական սահմանի Սոթքի հատուածին մէջ տեղակայուած հայկական դիրքերու ուղղութեամբ, որուն հետեւանքով դադարեցուած են Սոթքի ոսկիի հանքավայրի աշխատանքները, աշխատակիցները տարահանուած են: Այս մասին «Արմենփրես»-ին յայտնած է Սոթքի ոսկիի հանքավայրը շահագործող «Կէփրոմալինկ» ընկերութեան ներկայացուցիչ Ռուզաննա Գրի-



Ինժեներական աշխատանքներ իրականացնող զինծառայողներ ՀՀ ՁՈՒ ոլոր

գորեանը: «Ժամը 17:15-ի սահմաններում սկսել են կրակել: Ընկերութիւնը դադարեցրել է Սոթքի հանքավայրի աշխատանքը եւ տարահանուել է աշխատակիցներին՝ նրանց անվտանգութեան ապահովման նկատառումներից ելնելով», ըսաւ Գրիգորեան: «Ժամեր առաջ ատրպէյճա-

նական զինուած ուժերի կողմից սադրիչ գործողութիւնների հետ Շար.ը էջ 5

Փրոֆէսոր Եաշար Քորա Ելոյթ Կ'ունենայ «ՍԴՀԿ-Ը 1908 Թուականի Երիտթուրքական Յեղափոխութենէն Յետոյ» Նիւթին Շուրջ

«Մասիս» հրատարակչականի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ հանրային քննարկում «ՍԴՀԿ-Ը 1908 Թուականի երիտթուրքական յեղափոխութեան յետոյ, տեսութիւն եւ գործնականացում խորագրով, որ կը ներկայացուի փրոֆ. Եաշար Քորա Քորանի կողմէ Չորեքշաբթի, Ապրիլ 26 2023-ին, ժամը 8-ին, ՀԿԲՄ-ի Փաստախնայի կենտրոնէն ներս. հասցէ 1060 N Allen Ave., Pasadena: Դասխօսութեան կը շարժորդէ հարց ու պատասխան:

Եաշար Քորան վերջին շրջանի օսմանեան պատմաբան է, որ կենդրոնացած է հայկական համայնքներու ընկերային եւ մշակութային պատմութեան վրայ: Ան հրատարակած է տարբեր թեմաներ, որոնց շարքին՝ հայերու աշխատանքային պատմութիւնը, Օսմանեան բանակէն ներս հայ գինուորները եւ հայկական սոցիալիստական հրատարակութիւնները: Անոր ներկայիս հետազոտութիւնը կը վերաբերի հայերու դերին օսմանեան հիւսուածեղենի ապրանքափոխանակութեան եւ տասնիններորդ դարու վերջերուն անոնց ինքնութեան նշաններու վերածելու գործին:

Քորան իր դոկտորական (PhD)



Փրոֆէսոր Եաշար Քորան

վկայականը ստացած է 2016 թուականին Շիքակոյի Համալսարանէն իր ատենախօսութեամբ՝ «Փոխակերպելով էրզրումը/կարինը. Տասնիններորդ դարու բազմազգ օսմանեան քաղաքի սոցիալական եւ տնտեսական պատմութիւնը»: Շիքակոյի Համալսարանը ակարտելէ յետոյ դոկտոր Գորան պաշտօնավարած է Միչիկընի ինն Արպոր Համալսարանէն ներս՝ 2016-2017 թուականներուն: Ներկայիս

Շար.ը էջ 5

Կարո Փայլան Ներառուած Զէ Թեկնածուներու Ընտրացուցակին Կրայ



Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարո Փայլան

Թուրքիոյ խորհրդարանի միակ հայ պատգամաւոր Կարո Փայլանը յայտնած է, որ Մայիս 14-ին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը պիտի չառաջադրուի:

Քրտամէտ ընդդիմադիր ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (ԺԴԿ-HDP) անդամ Փայլանը տեղեկացուցած է, որ կուսակցութեան ընտրացուցակին մէջ իր չընդգրկուելու պայմանաւորուած է երկու ժամկէտի կանոնով: Այսինքն այն անձերը, որոնք 2 անգամ ստանձնած են պատգամաւորական մանտաթ, երրորդ անգամ պիտի չառաջադրուին: «Ես իմ կուսակցութեան կողմէ որպէս թեկնածու պիտի չառաջադրուիմ: Յաջողութիւն մեր բոլոր թեկնածուներուն:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Տնտեսութիւնը Որոշիչ Է Քաղաքական Գործընթացներում Տարածաշրջանի Լոգիստիկ Զարգերի Լուծում՝ Նաեւ Արխազական Երկաթուղու Միջոցով

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Փաստ է, որ Հայաստանից եւ Իրանից բեռնափոխադրումները ՌԴ եւ ԵԱՏՄ երկրներ իրականացուում են Վրաստանի տարածքով: Վերջինս էլ ունի զգալի առեւտրաշրջանառութիւն ՌԴ-ի հետ, չնայած այդ երկրների բարդ քաղաքական յարաբերութիւններին՝ կապուած Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի ճանաչման հետ: Յատկապէս կորոնավիրուսի համավարակի բռնկումից եւ ուքրաինական ճգնաժամի մեկնարկից յետոյ կտրուկ աւելացել են ՌԴ-Վրաստան սահմանի վերին Լարսի անցակէտով բեռնափոխադրումների ծաւալները:

Միայն 2022 թ. Հայաստանից ԵԱՏՄ երկրներ արտահանումն աճել է 2.8 անգամ, եւ մեր երկրի արտահանման ծաւալներում այն գրեթէ 50 տոկոս է: Աւելացել են նաեւ այդ տնտեսական միութիւնից ներմուծումների ծաւալները: Նման մեծ ապրանքաշրջանառութիւնը վրացական միակ անցակէտով օրինաչափօրէն բերում է գերծանրաբեռնուածութեան, դանդաղեցնում այն, իսկ որոշ դէպքերում էլ՝ երկարաժամկէտ խափանումների պատճառ դառնում: Այս հանգամանքով է թելադրուած Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ երկրորդ ճանապարհի ու անցակէտի կառուցման նախագծի ի յայտ գալը, որը նախաձեռնել է հենց Վրաստանը: Միւս կողմից էլ փորձեր են արւում վերականգնել ՌԴ-ի հետ լաստանաւային հաղորդակցութիւնը:

Վերելում ներկայացուածի ֆոնին գործնականում անգործութեան է մատնուած Վրաստան-ՌԴ միակ երկաթգծի աշխատանքը: Վրացական կողմն այն կապում է Աբխազիայի հետ, որի տարածքով էլ

անցնում է այս կարեւորագոյն ենթակառուցուածքը: Բայց պարզուում է, որ մեր հիւսիսային հարեւանը, ամենայն հաւանականութեամբ՝ Թուրքիայի յորդորով, թոյլատրել է Աբխազիայի տարածքով անցնող երկաթուղային գծերով բեռնափոխադրում իրականացնել ՌԴ-ից Թուրքիա: Փաստը երէկ հաստատել է Աբխազիայի մաքսային կոմիտէն: Այնտեղից յայտնել են, որ ՌԴ-ից 62 կոնտէյներով գնացքն առանց ուշացման անցել է Աբխազիայի մաքսային կէտերով: Աղբիւրը նաեւ յայտնել է, որ այլ փոքր բեռնափոխադրումներ նոյնպէս եղել են աբխազական երկաթգծով:

Չնայած Թիֆլիսում Թուրքիայի դեսպանատունը յայտնել է, թէ տեղեակ չէ բեռնափոխադրումներից, իսկ վրացական իշխանութիւնները մեկնաբանութիւններ չեն տալիս, բայց ակնյայտ է, որ այն հեռու է ապատեղեկատուութիւն լինելուց: Ուքրաինական հակամարտութեան հետեւանքով պատժամիջոցների մէջ յայտնուած ՌԴ-ի համար Թուրքիան պատուհան է դէպի արեւմուտք ապրանքաշրջանառութեան համար, որը մեծ ծաւալներ ունի, եւ առարկայական անհրաժեշտութիւն է ստեղծուել օգտագործել նաեւ աբխազական երակթուղին: Միւս կողմից էլ ՌԴ-ն Թուրքիայում իրականացնում է մի քանի խոշոր նախագծեր՝ կապուած ատոմակայանի կառուցման ու գազային հանգոյցի ձեւաւորման հետ եւ հաւանականութիւնը մեծ է, որ այդ աշխատանքների համար անհրաժեշտ բեռներ են տեղափոխուել երկաթգծով:

Բոլոր դէպքերում համաշխարհային տնտեսական ճգնաժամի եւ տարածաշրջանում լոգիստիկ ուղիների հարցում ստեղծուած բարդ իրավիճակում Վրաստանը կարող է տնտեսական հարցերին առաջնա-

հերթութիւններ տալ՝ դրանք առանձնացնելով քաղաքականներից: Դրանից առաջին հերթին կը շահի հենց Վրաստանը: Աբխազիայի տարածքով անցնող երկաթգծի գործարկումն անհրաժեշտ հնարաւորութիւնը կը տայ Հիւսիս-Հարաւ առեւտրատնտեսական հաղորդակցութեան ուղին Հայաստանով եւ Վրաստանով անցկացնելու համար՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ Ատրպէյճանը գործուն քայլեր է անում վերջինս իր տարածքով անցկացնելու եւ արեւմուտքից իրեն հարեւան երկու պետութիւններին տնտեսական այդ գերշահաւէտ ծրագրից դուրս թողնելու համար:

Աբխազական երկաթգծի օգտագործման հարցում Հայաստա-

նից, Վրաստանից եւ Թուրքիայից բացի շահառու է նաեւ Իրանը, որը սերտացնում է իր համագործակցութիւնը ԵԱՏՄ երկրների հետ: Այսօր աշխարհում այնպիսի իրավիճակ է, որ երկրների տնտեսական կարողութիւններն են ապահովում քաղաքական գործընթացների յաջող ընթացքը, հետեւաբար՝ շատ պետութիւններ առաջնային թիրախ են դարձրել տնտեսական խնդիրների լուծումները՝ յաճախ երկրորդելով քաղաքականը: Վերջին միտումներին մեր հիւսիսային հարեւանի քաղաքական ղեկավարները, ամենայն հաւանականութեամբ, քաջածանօթ են եւ դիտարկում են:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Հայաստանը Պէ՛տք է Միանայ Սեւ Ծովի Յատակով Եւրոպա Էլեկտրամատակարարման Ծրագրին

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՕՐՈՍԵԱՆ

2022-ի Դեկտեմբերի 17-ին Ատրպէյճանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Հունգարիայի ղեկավարները Պուխարեստում համագործակցութեան յուշագիր ստորագրեցին Հարաւային Կովկասից Սեւ Ծովի յատակով մալուխով դէպի Եւրամիութիւն «կանաչ էլեկտրաէներգիայի» արտահանման ծրագրի վերաբերեալ: Միջազգային հանրութիւնը չպէտք է աջակցի Հարաւային Կովկասում Հայաստանին մեկուսացնելու Ատրպէյճանի ռազմավարութեանը, այլ պէտք է քայլեր ձեռնարկի խրախուսելու այն տնտեսական նախագծերը, որոնցում ներգրաւուած են բոլոր երեք պետութիւնները: Հայաստանը կարող է միանալ այս ծրագրին:

Սեւ Ծովի յատակով Վրաստանից Ռուսաստան էլեկտրաէներգիայի ստորջրեայ տեղափոխման նախագիծը ենթադրում է մինչեւ 3 ԳՎտ բարձր լարման եւ 1195 քմ. երկարութիւն ունեցող մալուխի կառուցում, որը շահագործման կը յանձնուի 2029-ին: Իտալական CESI կազմակերպութիւնը 2022-ի Մայիսին սկսել է ծրագրի տեխնիկատնտեսական հիմնաւորման պատրաստումը: Նախատեսուում է, որ դա կ'աւարտուի 2023-ի վերջին: 2022-ի Դեկտեմբերի 17-ին Ատրպէյճանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Հունգարիայի ղեկավարները Պուխարեստում համագործակցութեան յուշագիր ստորագրեցին այս ծրագրի վերաբերեալ, որը նախատեսում է «կանաչ էլեկտրաէներգիայի» արտահանում Հարաւային Կովկասից դէպի Եւրամիութիւն:

Ծրագիրը կարող է ֆինանսաւորել ԵՄ Global Gateway նախաձեռնութիւնը: Այն ենթակառուցուածքների զարգացման ծրագիր է, որը նախատեսում է այդ նպատակների համար աւելի քան 300 մլրդ. եւրօ յատկացնել մինչեւ 2027-ը: Այնուամենայնիւ, եթէ Վրաստանում արտադրող էլեկտրաէներգիայի 80%-ի աղբիւրը հիդրոէլեկտրակայաններն են, Ատրպէյճանում «կանաչ էլեկտրաէներգիայի» գրեթէ բացառուում է, ինչը նշանակում է, որ Ատրպէյճանը չի կարող էլեկտ-

րաէներգիա արտահանել Եւրամիութիւն նշուած ծրագրի շրջանակում:

Հայաստանում արտադրող էլեկտրաէներգիան հիմնականում արտադրում է երեք տեսակի էլեկտ-

Շար.ը էջ 18

Ներքաղաքական Ստատուս-Քուոյի Անկախ Այլընտրանքը. Չտեսնուած Անիրաժեշտութիւն

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Օբիեկտիւ, թէ սուբիեկտիւ գործօններով պայմանաւորուած, այդուհանդերձ, Հայաստանում ձեւաւորուած է մի ներքին հասարակական-քաղաքական իրավիճակ, երբ նախկին ու ներկայ իշխանութեան փոխյարաբերութեամբ քաղաքականապէս ամրանում են այդ բեւեռները ներկայացնող ուժերը, սակայն՝ ամլանում է հասարակութիւնը: Հասարակութիւնն ամլանում է առնուազն երկու կարեւորագոյն հանգամանքի առումով: Մէկն այն է, որ այդ կերպ հանրութիւնը գրկուում է քաղաքական գործընթացների հանդէպ վերահսկողական գործառույթից, քանի որ յայտնուելով նախկին ու նոր իշխանութիւնների պայքարի արանքում, ինքն է դառնում այդ բեւեռների լիակատար վերահսկողութեան առարկայ:

Միւս հանգամանքը այն է, որ այդ կերպ հանրութիւնը գրկուում է կարեւորագոյն գործառույթից՝ քաղաքական եւ իշխանական ստատուս-քուօ ձեւաւորելու սուբիեկտութիւնից, այլ կերպ ասած՝ գրկուում լեգիտիմ իշխանափոխու-

թիւն իրականացնելու իրաւունքից, որը պետութիւնների համար ըստ էութեան հաւասարագոր է կեանքի իրաւունքին՝ պետական կեանքի իրաւունքին: Յատկապէս այն պետութիւնների համար, որոնք չունեն պետականութեան հարիւրամեակների կամ հազարամեակների աւանդույթ ու մշակույթ, ինչպէս նաեւ չունեն թէ՛ ժողովրդագրական, թէ՛ նրկատնտեսական խոշոր ռեսուրսներ: Այդ երկրների համար յոյժ կարեւոր է ունենալ իշխանափոխութեան լեգիտիմ եւ կենսունակ մեխանիզմ: Հանրութիւնը սակայն այսօր գրկուած է այդպիսի մեխանիզմից, քանի որ նախկին ու ներկայ իշխանութիւնները հաստատել են բաւականին կարծր ստատուս-քուօ:

Կրկնեմ, ըստ էութեան որեւէ նշանակութիւն չունի, թէ այդ ստատուս-քուօն աւելի շատ օբիեկտիւ, թէ՛ սուբիեկտիւ հանգամանքների արդիւնք կամ հետեւանք է: Կան թէ մէկ, թէ միւս հանգամանքները, եւ ստատուս-քուօն գոյութիւն ունեցող փաստ է, որի առնչութեամբ աներկբայ է մի բան՝ օբիեկտիւ է

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԷ ԱԶԱՊԱՂՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Ալեկ Սիմոնեան Երրորդ Խնդրած է

Ազգային ժողովի նախագահ Ալեկ Սիմոնեան Ֆէյսպուքի իր էջով ներողութիւն խնդրած է: Ան գրած է.

«Սիրելի հայրենակիցներ, ընկերներ,

Հաշուի առնելով, որ փողոցում ինձ հետ տեղի ունեցած միջադէպը շարունակում է քննարկուել, ուզում եմ արձագանգել: Նախ շնորհակալութիւն եմ յայտնում այն բոլոր մարդկանց, որոնք այս օրերին ինձ սատար են կանգնել եւ ուզում եմ մէկընդմիջտ փակել այս խօսակցութիւնը՝ թոյլ չտալով, որ մեր երկրի առաջ ծառայած լուրջ ինդիւիդուալ կողքին նման կենցաղային թեման շարունակի շրջանառուել:



Ազգային ժողովի նախագահ Ալեկ Սիմոնեան

նութեամբ, ես եւ մեր թիմի այլ ներկայացուցիչներ ապագայում էլ կը բախուենք նման իրավիճակների հետ: Նաեւ սա պատշաճ առիթ է քաղաքական ընդդիմութեան համար, որ վերջինս վերանայի իր հոետորաբանութիւնը, անձնական վերադարձներ հասցնելու իր մարտավարութիւնը եւ վերադառնա քաղաքակիրթ բանավէճի դաշտ: Տուեալ դէպքի կապակցութեամբ ուզում եմ ներողութիւն խնդրել Հայաստանի Հանրապետութեան բոլոր ԲԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻՑ»:

Լաւագոյն Լուծումը Պիտի Ըլլայ Գերիներու Փոխանակումը. Անդրանիկ Քոչարեան

Նախօրէին գիշերը Սիւրիան համայնքի Բնունիս վարչական շրջանին մէջ գիւղացիները յայտնաբերած էին ատրպէյճանցի զինուորական մը, որ իրաւապահները ձերբակալած էին: Յայտնի դարձաւ, որ ատրպէյճանցին միայնակ չէ եղած: Անոր հետ եւս զինուորական մը եղած է, որ թաքնուած է: Պաշտպանութեան նախարարութիւնը յայտնած էր, որ կ'ընթանան որոնողական աշխատանքներ՝ ատրպէյճանցի միւս զինուորականը յայտնաբերելու նպատակով:



Աժ Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը Civic.am-ի հետ զրոյցին բացառեց ներթափանցման մասին տարածուող վարկածները, նշելով «Եթէ ներթափանցման մասին է խօսուում, ապա որտե՞ղ է միջավայրը»:

Անդրադառնալով սահմանապահ համայնքներու բնակիչները զինելու հնարաւորութեան պատգամաւորը նկատեց, որ ամիսներ առաջ փոփոխութիւններ կատարուած են գէնք կրելու մասին օրէնքին մէջ, նաեւ այլ օրէնքներ ընդունուած են, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռեն լուծելու այդ խնդիրը: Անդրադառնալով ատրպէյճանցիներուն հետ բանակցութիւններուն՝ նշուած զինուորականները Ատրպէյճանին փոխանցելու հետ կապուած, Անդրանիկ Քոչարեան եսաւզ «Ատրպէյճանցիները, կարծում եմ, իրենք պէտք է կապի դուրս գան մեր ուժային կառուցների հետ, որովհետեւ վերջին հաշուով նրանք զինուորականներ են եւ նայել միայն, որ մոլորուել են՝ միամտութիւն կը լինի: Մասնաւոր են անցել, որի հետ կապուած կան իրաւական խնդիրներ: Մենք իրենց մօտ ունենք գերիներ եւ լաւագոյն լուծումը կը լինի, որ փոխանակում լինի մեր գերու կամ գերիների հետ»:

Հայաստանի Հարկային Եկամուտները Աճած Են 15,2 Տոկոսով

Պետական պիտոճէի հարկային եկամուտները 2023 թուականի առաջին եռամսեակին գերակատարուած են 14 միլիարդ դրամով: Կառավարութեան նիստին ժամանակ այս մասին յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Աւելին, առաջին եռամսեակի եկամուտները 2022 թուականի առաջին եռամսեակի նկատմամբ աճել են 15,2 տոկոսով կամ շուրջ 60,8 միլիարդ դրամով: 2023 թուականի առաջին եռամսեակի ընթացքում հաւաքագրուած գումարներից հարկ վճարողներին վերադարձուել է 93,5 միլիարդ դրամ, որը 2022 թուականի առաջին եռամսեակի ցուցանիշը գերազանցում է 82 տոկոսով կամ 42,2 միլիարդ դրամով», ըսաւ Փաշինեան:

Պարեկային Ոստիկանութեան Սեչ Կանանց Ներգրաւուածութիւնը Պէտք Է Ըլլայ 30 Տոկոս



Հայաստանի Հանրապետութեան մէջ թեւակոխած ենք Պարեկային Ոստիկանութեան ներդրման վերջին փուլ: Այս մասին կառավարութեան նիստին յայտնած է վարչապետը եւ նշած, որ անոր համար յառաջիկային դասընթացներ պիտի սկսին Արմաւիրի, Արարատի, Վայոց Ձորի եւ Սիւնիքի մարզերուն մէջ: «Մենք ի սկզբանէ խնդիր էինք դրել Պարեկային Ոստիկանութեան անձնակազմի առնուազն 30 տոկոսն ապահովել կանանցով: Այդ խնդիրն այս պահի դրութեամբ լուծուած չէ, բայց մենք չենք յուսահատուում ու չենք շեղուելու այս օրակարգից», նշած է վարչապետը:

բեր պատճառներով Պարեկային Ոստիկանութիւնում յառաջացող ու առկայ հաստիքները լրացնել միայն կանանցով: Ընդունելութիւնը կտեւի բաւականին երկար, մէկ, երկու, գուցէ երեք ամիս»:

Վարչապետը նշած է նաեւ, որ այս հարցով կ'ակնկալէ նախարարներուն, մարզպետներուն ու յատկապէս պետական կառավարման համակարգին մէջ ընդգրկուած կին առաջնորդներուն աջակցութիւնը:

Նշենք նաեւ, որ չգեկուցուող հարցերու փաթեթով կառավարութիւնը ընդունած է որոշում՝ ՀՀ Ոստիկանութեան Արարատի, Արմաւիրի, Վայոց Ձորի եւ Սիւնիքի մարզերուն մէջ ՀՀ Ոստիկանութեան պարեկային ծառայութեան գործունէութիւնը պատշաճ իրականացնելու նպատակով անհրաժեշտ այլ ինքնաշարժներու եւ սարքաւորումներու ձեռք բերման, ինչպէս նաեւ ՀՀ Ոստիկանութեան ստորաբաժանումներու շէնքային պայմաններու բարելաւման նպատակով:

Առաջին Եռամսեակին Դէպի Հայաստան Ձբօսաշրջային Այցերը Արձանագրած Են

Հայաստանի մէջ առաջին եռամսեակին զբօսաշրջային այցերու նկատելի աճ արձանագրուած է: ՀՀ Տնտեսութեան նախարարութեան Ձբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Սիւրիան Պօղոսեանը, ներկայացնելով թարմ տուեալներ, նշեց, որ առաջին եռամսեակին արձանագրուած է 450 հազար զբօսաշրջային այց: Այնինչ 2019 թուականին, երբ համավարակին նախորդող ժամանակաշրջանն էր, արձանագրուած էր 360 հազար զբօսաշրջային այց:

Խուժութեան: Մասնաւորապէս, իտալիացի դէպի Երեւան քանի մը ուղիղ թռիչքներ կան՝ Հոնոմ, Միլան, Վենետիկ, իսկ Հայաստանը աշխոյժ կ'աշխատի իտալիացի զբօսաշրջիկներ բերելու ուղղութեամբ: Սիւրիան Պօղոսեանը տեղեկացուց, որ այս ուղղութեանն եւս աշխուժութիւն կը նկատուի:

«Միայն Մարտ ամսին Հայաստան է եկել 160 հազար զբօսաշրջիկ: Սա շատ լաւ թիւ է մեզ համար: Առաջին անգամ է, որ մենք ունենք այսպիսի ցուցանիշ: 2019 թուականի Մարտ ամսին մենք ունեցել ենք 118 հազար զբօսաշրջիկ: Աշխուժութիւն շատ կայ Ռուսաստանից, Իրանից, ինչպէս գիտենք, Մարտին իրանցիները Նովրուզն են նշում: Յաջորդ երկիրը Վրաստանն է, այնուհետեւ Էմիրութիւնները: Մենք բաւական աշխոյժ աշխատանք ենք կատարել Տուրքիայում ու հիմա արդիւնքը տեսնում ենք: Այս տարուայ առաջին 3 ամսուայ ընթացքում բաւական հոսք ունենք այդտեղից», ըսաւ կոմիտէի նախագահը:

«Ձբօսաշրջիկների հոսք ապահովելու համար մեր թիրախային շուկաներն են Ռուսաստանը, Իրանը, Վրաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան, Ֆրանսան, Էմիրութիւնները: Դէպի Բալթեան երկրներ նոյնպէս ուղիղ չուերթներ են բացուում, ինչը նոյնպէս իր ազդեցութիւնը կը թողնի այդ երկրներից զբօսաշրջիկների հոսք ապահովելու համար: Ուղիղ չուերթները գործարկելուց առաջ մենք արդէն աշխատում ենք այդ երկրներում, գովազդում ենք Հայաստանի զբօսաշրջային հնարաւորութիւնները», ըսաւ Սիւրիան Պօղոսեան՝ աւելցնելով, որ նաեւ կ'աշխատին տարբեր երկրներու լրագրողական խումբերու, պլուրներու հետ, կը կազմակերպեն այցեր Հայաստան, ինչ որ նոյնպէս կը նպաստէ զբօսաշրջային աշխուժութեան ապահովման:

Վերջին շրջանին այլ երկիրներէն դէպի Երեւան բացուող ուղիղ թռիչքները նոյնպէս կը նպաստեն զբօսաշրջային այցերու աշ-

Հայաստանի մէջ զբօսաշրջիկներուն կը հետաքրքրեն պատմամշակութային վայրերը, խոհանոցը, արկածային զբօսաշրջային առաջարկները, բնութիւնը, արշաւները եւ այլն:

ԼՈՒՐԵՐ

Սուրեն Պապիկեանը Այցելած Է ՆԱԹՕ-ի՝ Եւրոպայի Մէջ Գերագոյն Հրամանատարութիւն



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեանը կ'այցելէ ՆԱԹՕ-ի՝ Եւրոպայի մէջ գերագոյն հրամանատարութիւն

Պրիւքսէլ կատարած աշխատանքային այցի շրջանակին մէջ ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեանը այցելած է ՆԱԹՕ-ի՝ Եւրոպայի մէջ ղաշնակցային ուժերու գերագոյն հրամանատարութիւն:

Տեղի ունեցած է ՀՀ պաշտպանութեան նախարարի դիմաւորման հանդիսաւոր արարողութիւն, որուն մասնակցած է հրամանատարութիւնը, ՆԱԹՕ-ի անդամ եւ գործընկեր երկիրներու ռազմական ներկայացուցիչները՝ պատուոյ պա-

հակախումբին եւ նուազախումբին մասնակցութեամբ:

Միւս կողմէ, ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի խօսնակ Արամ Թորոսեանը Civic.am-ի հետ զրոյցին յայտնեց, որ ընթացիկ տարուան մէջ ՊՆ-ն կը ծրագրէ մասնակցիլ Եւրոպայի մէջ ԱՄՆ ցամաքային զօրքերու հրամանատարութեան կողմէ կազմակերպուող 2-րդ զօրավարժութիւններու՝ KFOR (Քոսովոյի Ուժեր) եւ Saber Junction (Միաձուլուած Սուր) զօրավարժութիւններուն:

Հայաստանը Եւ Թուրքիան Կը Ծրագրեն Սահմանը Երրորդ Երկիրներու Քաղաքացիներուն Համար Բանալ Անրան Սկիզբը

Հայաստանը եւ Թուրքիան պայմանաւորուածութիւն ունին բանալ հայ-թրքական սահմանը ամրան սկիզբը երրորդ երկիրներու քաղաքացիներու եւ դիւանագիտական անցագիր ունեցող անձերու համար: Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրոյցին այս մասին ըսաւ ՀՀ ԱԺ փոխնախագահ Ռուբէն Ռուբինեանը:



ՀՀ ԱԺ փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան

նոյնպէս պատրաստուած են դրան: Յամենայնդէպս, չի հնչել որեւէ պնդում, որ պայմանաւորուածութիւնը ուժի մէջ չէ», նշեց Ռուբինեան:

«Կայ պայմանաւորուածութիւն, որ ցամաքային սահմանն այս ամրան սկզբին պէտք է բացուի երրորդ երկիրների քաղաքացիների եւ դիւանագիտական անցագիր ունեցող անձանց համար: Հայկական կողմը իր կողմից աշխատանքներ է տանում Մարկարա անցակէտը կահաւորելու համար: Կատարուած են աշխատանքներ, որպէսզի պատրաստ լինենք նշուած պայմանաւորուածութիւնները մեր կողմից իրականացնելու համար: Թուրքական կողմը յայտնում է, որ իրենք

ԵՄ Առաքելութեան Ներկայութիւնը Սահմանին Սօս Կ'առաջացնէ Պաքուի Անհանգստութիւնը

Եւրոմիութեան մէջ Ատրպէյճանի ներկայացուցչութեան ղեկավար, Պեյճիբալի եւ Լիւքսեմպուրկի մէջ ղեկավար Վալիֆ Սատիկովը յայտնած է, թէ ԵՄ առաքելութեան ներկայութիւնը Ատրպէյճանի սահմանին մօտ անհանգստութիւն կ'առաջացնէ Պաքուի մէջ:



միջեւ, բայց այդ տեղի կ'ունենայ մեր սահմանային յենակէտերէն քանի մը հարիւր մեթր հեռաւո-

Արմէն Գրիգորեան Հանդիպած Է Իրանի Իր Պաշտօնակիցին Հետ



Արմէն Գրիգորեան եւ Ալի Շամխանի հանդիպումի ընթացքին

Ապրիլ 9-ին ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան աշխատանքային ընթրիք ունեցած է Իրանի Իսլամական Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Գերագոյն Խորհուրդի քարտուղար Ալի Շամխանիի հետ:

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են տարածաշրջանին մէջ ստեղծուած անվտանգային իրավիճակը: Զրուցակիցները նաեւ անդրադարձած են երկկողմ հայ-իրանեան յարաբերութիւններու օրակարգին եւ զարգացման հեռանկարներուն:

«Ատրպէյճանը Պիտի Դժուարանար Վերցնելու Ղարաբաղը, Եթէ Մենք ԱԹՍ-Ներ Զարտադրէինք». Զաւուշօղլու

Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութեան (AKP-ԱԶԿ) Աֆեոնքարահիսարի ընտրական համակարգման կեդրոնի բացման ժամանակ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեվլութ Չաւուշօղլուն, խօսելով հարուածային ԱԹՍ-ներու արտադրութեան մասին, անդրադարձած է նաեւ ղարաբաղեան 44-օրեայ պատերազմին:



Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեվլութ Չաւուշօղլու

«Թուրքիան այսօր ռազմադիւնաբերութեան ոլորտին մէջ ազգային եւ տեղական արտադրութիւնը բարձրացուցած է 80 տոկոսի: Եթէ մենք այդ ցուցանիշին չհասնէինք, չարտադրէինք հարուածային ԱԹՍ-ներ, չարտադրէինք ամէն տեսակ ցամաքային, հակաօդային պաշտպանութեան եւ յարձակման համակարգեր, այդ շարքին՝ ուղղաթիռներ, Ատրպէյճանը պիտի դժուարանար վերցնելու Ղարաբաղը», ըսած է ան:

յաջորդած ճեպագրոյցին ժամանակ անդրադարձած է նաեւ Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններուն:

Նաեւ ընդգծած է, որ Թուրքիան պիտի շարունակէ զարգացնել տեղական ռազմարդիւնաբերութիւնը, փորձելով նուազագոյն կախման մէջ ըլլալ այլ երկիրներէ:

Մեվլութ Չաւուշօղլուն Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերէյ Լաւրովի հետ հանդիպման

Չաւուշօղլուն այս մասին ըսած է Սերէյ Լաւրովի հետ համատեղ ճեպագրոյցին ժամանակ:

Չաւուշօղլուն նշած է, որ Անգարան անհրաժեշտ կը համարէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ որքան հնարաւոր է շուտ խաղաղութեան պայմանագրի կնքումը:

րութեան վրայ եւ խիստ ռազմականացուած գօտիի մէջ, ուր մենք ունինք ռուս սահմանապահներ, հայ սահմանապահներ, ռուսական կանոնաւոր ստորաբաժանումներ, հայկական կանոնաւոր ստորաբաժանումներ եւ Իրանի սահմանին աւելի մօտ՝ Իրանեան գինուժը: Այժմ մենք ունինք նաեւ ԵՄ առաքելութիւնը: Այսպիսով, մենք ունինք անվտանգութեան օրինական հարցեր», ըսած է Սատիկովը «Politico»-ին տուած հարցազրոյցին մէջ:

փորձ:

Իր հերթին, ԵՄ դիւանագիտական ծառայութեան բարձրաստիճան ներկայացուցիչը, անանուն մնալու պայմանով, «Politico»-ին ըսած է, որ Պաքուի հետ յարաբերութիւններուն մէջ ԵՄ-ն «այլ սենարի յոյս ունէր», նշելով որ Պրիւքսէլը Ատրպէյճանի հետ կը կիսուի տեղեկատուութեամբ՝ Հայաստանի մէջ սահմանին պրեկլութեան մասին:

Անոր խօսքով՝ այս առաքելութիւնը կարելի է դիտարկել որպէս Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ իր ներկայութիւնը ամրապնդելու Պրիւքսէլի

կը կիսենք բոլոր համապատասխան տեղեկութիւնները պարեկութեան եւ այլնի մասին, քանի որ չենք ուզեր որեւէ խնդիր», յայտնած է Եւրոպայի պաշտօնեան:

Արցախը Հանդիպելու Առաջարկ Ըրած Է Պարուհին՝ Մարդասիրական Հարցերով

Արցախի իշխանությունները ատրպէյճանական կողմին հետ ուսական խաղաղապահ առաքելութեան տեղակայման վայրին՝ Իւանեանի մէջ, հանդիպելու առաջարկ փոխանցած են Պաքուին, ինչպէս հաղորդած է Տեղեկատուական շտաբը, «մարդասիրական բնույթի անյետաձգելի հարցեր քննարկելու համար ուսական խաղաղապահներու հրամանատարութեան միջնորդութեամբ»:



Արցախի խորհրդարանի իշխող «Ազատ Հայրենիք» խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեանի փոխանցմամբ՝ կը փափաքին քննարկել գրեթէ բոլոր հարցերը՝ ճանապարհէն մինչեւ կազ:

«Մարդասիրական հարցերը վերաբերում են ելեկտրականութեան մատակարարման վերականգնմանը, կազմատակարարման վերականգնմանը, ճանապարհի ապաշրջափակմանը, այսինքն՝ այն ենթակառուցուածքային եւ մարդասիրական հարցերը, որոնք հրատապ կանգնած են մեր ճգնաժամը վերացնելու համար», նշեց ան:

Վերջին անգամ Պաքուի ու Ստեփանակերտի ներկայացուցիչներուն միջեւ շփում եղած էր Մարտի սկիզբը, որմէ գրեթէ 1.5 ամիս անց Ստեփանակերտը կ'առաջարկէ դարձեալ խօսիլ: Ինչո՞ւ հիմա, արդեօք կա՞ր անոր համար յստակ պատճառ, «Ազատութիւնը» հետաքրքրուեցաւ Յարութիւնեանին: Անոր խօսքով՝ առաջարկին պատճառը ընդամենը Արցախի մէջ ճգնաժամը մեղմելու անհրաժեշտութիւնն է. «Դրանք այսօր ճգնաժամ են յառաջացրել Արցախում, եւ մենք յայտնել ենք, որ մենք պատրաստ ենք շփումներ իրականացնելու, բայց այդ հարցե-

րի շուրջ, այսինքն՝ այն ենթակառուցուածքային եւ մարդասիրական հարցերը, որոնք հրատապ լուծումներ են այսօր պահանջում, իսկ քաղաքական բովանդակութեան մասով մենք պատրաստ ենք, այդ թւում՝ քաղաքական բովանդակութեան բանակցութիւնների մասնակցելու, վարելու միայն, որ Արցախը որպէս լիարժեք բանակցային կողմ ճանաչելու, ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջութեամբ եւ սպառնալիքի, ուժի չկիրառման սկզբունքները հիման վրայ»:

Երկու շաբաթ առաջ Ստեփանակերտը մերժած էր Ատրպէյճանի Պաքուի մէջ հանդիպելու եւ «համարկման հարցեր քննարկելու» առաջարկը: Արցախի Արտաքին Գործերու Նախարարութիւնը կրկնած էր նախապէս հնչեցուցած դիրքորոշումը, թէ պատրաստ են հանդիպելու Ատրպէյճանի ներկայացուցիչներուն, բայց Արցախի մէջ եւ ուսական խաղաղապահներուն միջնորդութեամբ՝ քննարկելու Լաչինի միջանցքի անխափան գործունէութեան հետ կապուած հարցեր: Արցախի խորհրդարանի ընդդիմադիր պատգամաւոր Մետաքսէ Յակոբեանը, սակայն, կը չի շեղուի, որ մարդասիրական հարցեր քննարկելու համար Ստեփանակերտի ու Պաքուի ներկայացուցիչներու Մարտի սկիզբի հանդիպումը լաւ էր աւարտած:

Լարուած Իրավիճակ Սահմանին

Շարունակուած էջ 1-էն

տեւանքով այժմ Հայաստանի սահմաններին հանգիստ չէ: Ես ցանկանում եմ մեր զինուած ուժերին եւ զինուորներին զօրակցութեան խօսքեր ասել Աժ անունից, ուժ եւ կորով մաղթել նրանց մեր հայրենիքի սահմանների պաշտպանութեան հարցում», յայտնեց Աժ փոխնախագահ Յակոբ Արշակեանը:

Ան յոյս չայտնեց, որ մինչեւ յաջորդ օր սահմանային իրավիճակի որոշակի հանգուցալուծում կ'ըլլայ, եւ առաջարկեց բոլոր մնա-

ցած հարցերուն անդրադառնալ յաջորդ օրուան նիստին:

Աւելի ուշ, Պաշտպանութեան նախարարութիւնը յայտնեց որ, իրավիճակը կայունացած է, սակայն Հայկական կողմը ունի 4 զոհ եւ 6 վիրաւոր: Իսկ ատրպէյճանական կողմը ունի մեծաթիւ զոհեր եւ վիրաւորներ:

Պաշտպանութեան նախարարութիւնը նաեւ հերքեց ատրպէյճանական կողմի տարածած տեղեկութիւնը, թէ Հայկական զինուած ուժերը օգտագործած են իրանական անօդաչու թռչող սարքեր՝ ԱԹՄ-ներ:

Փոքիտը Եաշար Քորա Ելոյթ Կ'ունենայ

Շարունակուած էջ 1-էն

ան դասախօս է Սթամպուլի Պողոս-գիչի համալսարանի պատմութեան ամպիոնէն ներս:

2022 թուականին դոկտոր Քորան արժանացած է պատմութեան բնագաւառէն ներս երիտասարդ

գիտնականի մրցանակին՝ Թուրքիոյ Գիտութիւններու Ակադեմիային կողմէ: Ներկայիս դոկտոր Քորան Tarih Vakfi Press-ի գլխաւոր խմբագիրն է եւ Շիքակոյի համալսարանի 2023 թուականի գարնան Դոմանեանի անուան հայագիտականի այցելու փրոֆէսորը:

Թուրքիոյ Պաշտպանութեան Նախարարը Կը Շարունակէ Հերքել Հայոց Ցեղասպանութիւնը

1915 թուականի իրադարձութիւններուն շուրջ Հայաստանին ու հայկական սփիւռքին դիրքորոշումը հիմնական խոչընդոտն է Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու կարգաւորման ճանապարհին, յայտնած է Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Հուլուսի Աքարը:

Աքար այս թեմայով ծաւալուն դասախօսութիւն կարդացած է Անգարայի Պիլիմ համալսարանին մէջ, ուր այս օրերուն խորհրդաժողով տեղի կ'ունենայ՝ 1915 թուականի հայկական իրադարձութիւններուն մասին ուղեցոյց մշակելու համար:

«Հայկական հարցը կտրուած է պատմական իրողութիւններէն եւ օգտագործուած է որպէս քաղաքական գործիք աւելի քան մէկ դար՝ յայտնուելով փակուղիի մէջ: Հայերի միակողմանի քարոզչութեամբ գծուած է Օսմանեան կայսրութեան բացասական պատկերը, մինչդեռ հայերուն կողմէ Թուրքերու կոտորածները մնացած են անտեսուած», յայտնած է Աքարը:

Ան չի շեղուցած է, որ իր դոկտորական թեզը պաշտպանած է այս թեմայով, Աթաթուրքի անուան ժամանակից պատմութեան համալսարանին մէջ հետազոտած է ամերիկացի զօրավար Հարպրորտի առաքելութիւնը, որ Փարիզի հաշտութեան համազումարին որոշմամբ Ամերիկայէն Հայաստան ու Մերձաւոր Արեւելք ուղարկուած էր Առաջին Համաշխարհային պատերազմէն յետոյ:

«Իմ ուսումնասիրութիւններա կը փաստեն, որ հայկական պնդումները ապացուցող որեւէ փաստ չկայ», յայտնած է Աքար ու մօտ քսան վայրկեան շարունակուած ելոյթին մէջ կրկնած է պաշտօնական Անգարայի դիրքորոշումը: Այն է՝ Ցեղասպանութիւնը մտացածին է, այդ մասին պնդումները՝ հրահրուած. «Օսմանեան կայսրութեան տարածքին գործող արեւմտեան առաքելութիւնները համազործակցած են ծայրայեղ ազգայնական հայկական իմբաւորումներու հետ, զանոնք դրդել անկախութեան եւ օգտագործել որպէս գործիք՝ իրենց նպատակներուն հասնելու համար: Հայերը սկիզբը այդ գաղափարներուն չէին աջակցեր, զանոնք Օսմանեան կայսրութեան մէջ «միլլեթ-ի-սաուրէ» կը կոչէին՝ չէզոք ժողովուրդ: Բայց գերտերութիւնները՝ Միացեալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսան ու Ռուսիան, սաղբելով հայերը, կը ձգտէին հասնելու իրենց նպատակներուն, ինչ որ ալ ի վերջոյ յանգեցուց հայկական հարցին»:

Աքար կրկնած է պատմական արխիւները բանալու առաջարկը, որ Թուրքիոյ նախագահը ներկայացուցած էր Հայաստանի թէ՛ նախորդ, թէ՛ ներկայ իշխանութիւններուն: Չորս տարի առաջ՝ Հայաստանեան յեղափոխութեան յետոյ, Ապրիլ 24-ին էրտողան յայտարարած էր, որ Թուրքիոյ արխիւները բաց են, եւ իրենք թաքցնելու ոչինչ ունին,



Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Հուլուսի Աքար:

մինչդեռ «հայկական հարցը շահարկող ոչ մէկ խումբ եւ պետութիւն իր պնդումները չէ կրցած ապացուցել»:

«Այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութեան մասին յայտարարութիւններով լարուածութիւն ստեղծողներէն ունէ մէկուն ճշմարտութիւնը չի հետաքրքրեր», ըսած էր Թուրքիոյ նախագահը՝ Հայաստանին, ինչպէս նաեւ երրորդ երկիրներուն կողմէ ընելով բանալու իրենց արխիւները պատմաբաններու ուսումնասիրութեան համար:

Նոյնը նաեւ պաշտպանութեան նախարարը կրկնած է. «Իւրաքանչիւր ոք պէտք է գիտնայ՝ պատմութիւնը չի կրնար խմբագրուել յայտնի քաղաքական յայտարարութիւններով, եւ անոնք, որ այդպիսի դիրքորոշում կ'որդեգրեն, պէտք է ամէնայն նայելու աշխարհին ու սեփական պատմութեան: Մենք՝ Թուրքերս, բացած ենք մեր արխիւները եւ պատրաստ ենք պատմաբաններու անաչառ յանձնաժողով ստեղծելու: Մեր նախագահը ընդգծած է այդ ամէն առիթով ու ամէն տեղ: Մենք կը վերահաստատենք մեր կոչը այս թեմայով: Հայաստանն ալ Թուրքիոյ նման պէտք է բանալ իր արխիւները պատմաբաններուն առջեւ: Մենք այս մասին բազմիցս ըսած ենք, բայց որեւէ արձագանգ այս առաջարկին դեռ չենք ստացած»:

Թուրքիոյ պաշտպանութեան նախարարը միաժամանակ պնդած է, որ անթոյլատրելի է պատմութեան թշնամանք քաղել ու խորացնել հակասութիւնները. «Չնայած կատարուածին՝ Թուրքիան կը շարունակէ հաւատալ, որ հայերն ու Թուրքերը, որ դարերով ապրած են հաշտութեան ու համակեցութեան մէջ, կրնան յարաբերութիւններ հաստատել բարեկամութեան ու համագործակցութեան շրջանակներուն մէջ»:

Խօսելով Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու հնարաւորութեան՝ Աքար անմիջապէս անդրադարձած է Թուրքիոյ պատմութեան հայկական յարաբերութիւններուն, չի շատակած է խոստովանելու կրկին ընդգծած է, որ Անգարան եղբայրական Պաքուին երբեք միայնակ պիտի չթողէ:

Ատրպեյճանը Լայնածաւալ Նոր Ռազմական Գործողութիւններու Պիտի Չերթայ. «Սթրաթֆոր» Վերլուծական Կեդրոն

Ըստ «Սթրաթֆոր» վերլուծական կեդրոնի գեկոյցին՝ Ատրպեյճանը Ղարաբաղի մէջ կամ Հայաստանի սահմաններուն լայնածաւալ նոր ռազմական գործողութիւններու պիտի չերթայ, քանի որ իր նպատակներուն կը հասնի փոքր քայլերով, իսկ իրանը, չնայած մտահոգուած է առեւտրային ուղիներ կորսնցնելու հեռանկարէն, հակամարտութեան մէջ ուղիղ պիտի չներգրաւուի:

Նման եզրակացութիւններու յանգելու համար «Սթրաթֆոր»-ի վերլուծաբանները շարք մը հանգամանքներ կը նշեն:

Առաջինը՝ անոնք կը նշեն բանակցային գործընթացին փաստացի դադարը: Քանի որ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան բանակցութիւնները կանգ առած են, աւելի հաւանական կը դառնան Լեռնային Ղարաբաղի մէջ կամ Հայաստանի տարածքէն դուրս հանուր սահմանին բռնութիւններու բռնկումները, բայց «Ատրպեյճանի լայնածաւալ ռազմական գործողութիւն կամ հակամարտութեան իրանի ուղիղ միջամտութիւնը կը մնայ քիչ հաւանական», կը գտնեն վերլուծաբանները՝ գնահատելով Լեռնային Ղարաբաղի մէջ իրավիճակի սրացման վտանգները:

Լեռնային Ղարաբաղի մէջ եւ Հայաստանի սահմաններուն Ատրպեյճանի գործողութիւնները եւ Երեւանի գոյնազոյնները անոնք կը համարեն երկու երկիրներուն միջեւ լարուածութեան աճի վերջին նշաններ, գտնելով որ 2020-ին ձեռք բերուած զինադադարի ապահովումը կարծես չի գործեր:

«Քանի դեռ բանակցութիւնները կանգ առած են, Ատրպեյճանը աւելի հաւանական է, որ դիմէ զինադադարի փոքր մասշտաբներու խախտումներու՝ Լեռնային Ղարաբաղի մէջ մարտավարական շահաւէտ դիրքեր գրաւելու, կամ Հայաստանի տարածքէն դուրս սահմանի երկայնքով նմանատիպ գործողութիւններ կատարելու համար», կը գրեն «Սթրաթֆոր»-ի վերլուծաբանները:

«2020-ի Նոյեմբերին կրակի դադարեցման համաձայնագիրը ստորագրելէն ի վեր Պաքուն բազմիցս կիրառած է այդ ռազմավարութիւնը՝ ստիպողաբար յառաջ մղելով դիւանագիտական գործընթացը, միաժամանակ ցուցադրելով ու մեծցնելով իր ազդեցութեան լծակները: Լայնածաւալ ռազմական գործողութիւն Ղարաբաղի մէջ կամ Հայաստանի սահմանին Ատրպեյճանը դժուար թէ սկսի, որովհետեւ աւելի քիչ ծախսատար մեթոտները Պաքուն կրնան հնարաւորութիւն տալ պահպանելու յառաջընթացը իր նպատակներուն հասնելու համար:

Ամէն անգամ, երբ ատրպեյճանական ուժերը յառաջընթաց կ'ունենան, այդ կը բարելաւէ անոնց մարտավարական դիրքերը, նոյնիսկ եթէ տարածքային այդ շահաւէտ ինքնազոյնութիւնը քանի մը մեթոտ է: Այդ մանովները նաեւ կը մեծցնեն Ատրպեյճանի կառավարութեան բանակցային դիրքերը», կը նշեն «Սթրաթֆոր»-ի վերլուծաբանները:

Անոնց գնահատմամբ՝ մեծ տարածքներ գրաւելու համեմատ

այդ ռազմավարութիւնը Ատրպեյճանին թոյլ կու տայ շարունակելու ամրապնդել իր դիրքերը եւ նպատակներուն հասնելու քայլերը առանց Հայաստանի հետ լայնածաւալ պատերազմի մէջ մտնելու եւ առանց միջազգային հանրութեան կողմէ դատապարտուելու, հաւանական է նաեւ պատժամիջոցներու տակ իյնալու վտանգներու:

«Այսպիսով, Պաքուն քիչ մղումներ ունի պատերազմական գործողութիւններով Լեռնային Ղարաբաղի մէջ մնացած տարածքներուն մեծ մասը կամ ամբողջութեամբ գրաւելու, կամ Հայաստանի հարաւը որոշ շրջաններ գրաւելու համար: Աւելին, Ատրպեյճանը քիչ շահագրգռուած է անհարկի վտանգի ենթարկել խաղաղութեան համաձայնագիրը, որ հաւանաբար մեծապէս իր օգտին պիտի ըլլայ», նշուած է «Սթրաթֆոր»-ի գեկոյցին մէջ:

Վերլուծական կեդրոնին փորձագէտները եւս մէկ հանգամանք կը նշեն: Չնայած Հայաստանը ջանքեր կը գործադրէ ընթացիկ բնականոնացման գործընթացի միջոցով բարելաւելու յարաբերութիւնները, այդ շարքին՝ Ռուսիոյ, ԱՄՆ-ի, Եւրոմիութեան, նոյնիսկ Թուրքիոյ հետ, այնուամենայնիւ շատ քիչ հաւանականութիւն կայ, որ Երեւանը կարենայ հասնիլ այնպիսի արտաքին գործընկերութեան, որ լրջօրէն խանգարէ Ատրպեյճանին հասնելու իր նպատակներուն:

Սա եւս մէկ հանգամանք կը համարուի, որ Ատրպեյճանը Լեռնային Ղարաբաղ կամ Հայաստան լայնածաւալ ներխուժման հրատապ անհրաժեշտութիւն չի տեսներ:

«Սթրաթֆոր»-ը կը գտնէ, որ Թեհրանը պիտի շարունակէ Ատրպեյճանին զսպել գործողութիւնները՝ պահպանելով երկու երկիրներուն միջեւ առանց այդ ալ բարձր լարուածութիւնը:

«Ատրպեյճանի կողմէ 2020 թուականի զինադադարի շարունակաբար խախտումները, զուգորդուած Ուքրանիոյ մէջ ռուսական բանակի անյաջողութիւններուն հետ, խաթարած են ինչպէս ռուս խաղաղապահներուն հեղինակութիւնը Լեռնային Ղարաբաղի մէջ, այնպէս ալ Ատրպեյճանի ոտնձգութիւններէն Հայաստանը պաշտպանելու Ռուսիոյ յանձնառութեան հանդէպ վստահութիւնը: Սա անհանգստացուցած է հարեւան իրանը, որովհետեւ Հայաստանի հարաւ Ատրպեյճանի ներխուժումը կրնայ արգելափակել Սեւ ծովի հետ իրանին կապող առեւտրային ուղիները», կը գրեն փորձագէտները՝ նշելով նաեւ, որ իրանը աշխուժացուցած է Ատրպեյճանին սպառնալու փորձերը, յուսալով զայն ետ պահել Հայաստանի հարաւին վրայ յարձակելէ:

Սակայն, անոնք քիչ հաւանական կը համարեն հակամարտութեան իրանի ուղիղ միջամտութիւնը՝ հաշուի առնելով անոր ներքաղաքական հետեւանքները իրանի վարչակարգին վրայ, ինչպէս նաեւ հնարաւոր պատերազմը ՆԱԹՕ-ի անդամ Թուրքիոյ հետ:

Արծազանգէք Աղաղակին

ԲԱԳՐՍ ԵՍՂՈՒԳԵԱՆ

Վաղեմի ընկերներէս Արտաշէս Չառուշեան իբրեւ անեկդոտ պատմած էր Մելքոնեանի ննջարանին մէջ սեւամորթ հայերու հետ ծանօթանալու պահը: Արտաշէս պատկերացում իսկ չունէր թէ աշխարհի երեսին կան սեւամորթ հայեր ալ: Սեւամորթ եւ բոլորովին հայախօս: Հայախօս ըսելով այս անգամ կը յիշեմ սիրելի Լուիզ Պաքարի մէկ վկայութիւնը, որ կարդացած եմ «Ակօս»-ի էջերուն վրայ: Ան ալ կը պատմէր Մեսրոպ Պատրիարքի հետ դէպի Հոռոմկլայ ելած ճամբորդութեան ընթացքին Պրեզիտի մօտակայ Սէյլեք գիւղի մէջ հանդիպած տարեց հայուն, որ անթերի հայերէնով մը դիմաւորած էր մեր պատրիարքը եւ կոչը աչքերով առաջնորդած իր խնամած այգին: Նուրի էր այդ ծերունիի անունը:

Այս օրինակները վերջիջելով կը տարուի մտածելու թէ Աստուած իմ, աշխարհի վրայ հայու ի՞նչ կերպարներ կան, որոնք հեռու են մեր ընկալումներէն: Երեքշաբթի օր Գոլմագաբուի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ ինծի համար շատ սիրելի ու արժէքաւոր Հաբոս Պաքարը օրհորհրդով յուղարկաւորութեան ընթացքին եկեղեցին եւ բակը ամբողջովին լեցուցած զանգուածի դէմքերուն նայելով կրկին անգամ մտաբերեցի նոյն հարցումը:

Եթէ խնդրին նայինք պոլսահայ համայնքի մակարդակով, կարելի է ենթադրել թէ մեզմէ շատեր դոյզն իսկ պատկերացում չունին Ատրեամանի Գահթա գաւառին մէջ բնակութիւն պահած շուրջ 20 հազար հայերու մասին: Հազիւ այս վերջին տարիներուն է որ անոնք յաջողեցան իրենց գաւաղները Գալֆայեան կամ Դպրեկանքի նման Պոլսոյ վարժարաններ ուղարկել: Իսկ այսքանը, նոյնիսկ այդ աշակեր-

տութեան արձանագրած յաջողութիւնները բաւարար եղա՞ն այդ զանգուածին տեսանելի ըլլալուն համար:

Եթէ Մեծ Եղեռնէն այս կողմ երկրի խորքերուն իրենց գոյութիւնը պահած հայեր կան, եթէ կ'ուզեն տեսանելի ըլլալ եւ կը մերժուին կամ կ'արհամարուին իրենց հայախօս չըլլալուն, հայերէն անուն չունենալուն պատճառաւ, ուրեմն իբրեւ համայնք մեծ խնդիր մը ունինք:

Արդար ըլլալու համար նշենք թէ Պատրիարքական Աթոռը որոշ հոգատարութիւն ունի գաւառի հայութեան հանդէպ: Այս համոզումին կը հասնինք ոչ միայն վերջին երկրաշարժի աղէտէն ետք ցուցաբերուած աջակցութեան, այլ Երեւանի մէջ ՄԱԿ-ի գաղթականաց գրասենեակի կարգադրութիւններուն սպասող քանի մը տասնեակ իրաքահայերու օրինակն ալ նկատի ունենալով:

Վերադառնանք Ատրեամանի Գահթա եւ Կերկեր գաւառներու հայութեան: Ատրի եկեղեցին այստեղ ունի եպիսկոպոսական աթոռ: Տարածքի բոլոր քրիստոնեաներու հոգեւոր ծառայութիւնը իրեն կը վիճակեն: Իսկ մեր եկեղեցին նոյնիսկ կը զլանայ այցելու հոգեւորականով իսկ ծառայութիւն մատուցել: Մանաւանդ ալ նշենք որ գաւառի հայութեան ընդհանուր հովիւ նշանակուած Տէր Աւետիս Թապաշեան ինք եւս Ատրեամանցի է: Սակայն ի վիճակի չէ ինք իր զխուճ հովուապետական այցելութիւն կատարելու:

Ուրեմն մեզի կը վիճակի Պատրիարքարանը հրաւիրել իր պաշտօնին թելադրած առաքելութիւնը կատարելու:

Սրբազանք ու պարոնայք, նաեւ տիկնայք եւ երեխէք, գիտցէք որ կորած հարազատներ ունիք այս երկրի տարածքին եւ անոնք կը սպասեն իրենց ճիշդ լսող խիղճերու արձագանգին:

«ԱԿՕՍ»

GIVE HOPE THIS SPRING.

Give blood.

Blood Drive
IN COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE

Thursday, April 20, 2023
2:30 p.m. to 8:30 p.m.

Armenian Educational Benevolent Union
A.E.B.U. Hall
1060 N. Allen Ave Pasadena, CA. 91104

Please visit RedCrossBlood.org and enter sponsor code: AEBU to schedule an appointment.

Be cool. Give blood. Come give 4/1-23 for a special Red Cross and PEANUTS Joe Cool T-shirt, ltd qty!

Streamline your donation experience and save up to 15 minutes by visiting RedCrossBlood.org/RapidPass to complete your pre-donation reading and health history questions on the day of your appointment.

1-800-RED CROSS | 1-800-733-2767 | RedCrossBlood.org | Download the Blood Donor App

Դժուար է Իմանալ, Բայց Պէտք է

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Պարզու՞մ է՝ Թուրքիայի պաշտպանութեան նախարար Հուլուսու Աքարը գիտութիւնների դոկտոր է, ընդ որում՝ ատենախօսութիւն է պաշտպանել 1915 թուականի «իրադարձութիւնների» թեմայով: Ձեռքի տակ էլ ունեցել է ամերիկացի գեներալ Հարբորտի «Ձեկոյցը»:

1966-ին աւարտեցի Պէյ-րուսի Հայկազեան Գոլեմը (այժմ համալսարան): Այդ տարուան աւարտական դասարանին մէջ կային երկու ժիրայրներ, ժիրայր Դանիելեանն ու ժիրայր Զէնեանը: Երկուքն ալ յետագային դարձան մեր գաղութի նշանաւոր դէմքերէն: Առաջինը մասնագիտացաւ հայագիտութեան մէջ, իսկ երկրորդը՝ լրատուական ասպարէզին մէջ:



Ես բախտաւորութիւնը ունեցայ դասընկերը դառնալու երկու ժիրայրներուն ալ, անշուշտ կարգ մը նիւթերու մէջ միայն՝ քանի մեր ընտրած մասնագիտութիւնները տարբեր էին: Կային պարտադիր նիւթեր, անկախ ուսանողի մը ընտրած մասնագիտութենէն, որ բոլոր ուսանողները պէտք էր յաջողութեամբ անցնէին: Այդ նիւթերէն մին էր Կրօնքի Փիլիսոփայութիւնը (Philosophy of Religion):

Դժուարին այդ նիւթի մեր դաստուն էր Գոլեմի Նախագահ Վերապատուելի Դոկտ. Ժան Մարգարեանը: Չեմ մոռնար երբեք երբ քննութեան մը մէջ բոլոր աշակերտները ձախողած էին: Դոկտ. Մարգարեան այդ դասը անգամ մը եւս բացատրեց եւ մեզի լաւ մը սորվելու բաւական ժամանակ տրամադրել էտք, դարձեալ քննութիւն տուաւ: Կը զարմանա՞ք երբ ըսեմ թէ բոլորս ալ նորէն ձախողեցանք ...

Ժիրայր Դանիելեան՝ Գոլեմը աւարտելէ ետք, Վերապատուելի Տիգրան Խրոջեանի սկսած հայկական գիրքերու հաւաքածոն վերածեծ հայագիտական լիբրալ գրադարանի եւ ուսումնասիրութեաց կեդրոնի: Ան իր տքնաջան աշխատանքով եւ գիտական հետազոտութիւններով հռչակ ստացաւ ու ի վերջոյ դարձաւ Հայկազեան Գոլեմի Հայագիտական գրադարանի գրադարանապետը:

Ժիրայր՝ Հայկազեան Գոլեմի իր 23 տարուան պաշտօնակատարութեան ընթացքին եւ վերջը, կը վարէր նաեւ խմբագրութիւնը գրական այլազան հանդէսներու եւ պարբերաթերթերու, ինչպէս՝ «Հայկազեան հայագիտական հանդէս»ին, «Հիւսիսեան հայագիտական տարեգիրք»ին, «Հասկ հայագիտական տարեգիրք»ին, «Երիտասարդ հայ»ին եւ այլն:

Ժիրայր՝ մանկավարժական իր մասնագիտութիւնը ի սպաս դրաւ նաեւ ուսումնական հաստատութիւններէն ներս, դառնալով արժանաւոր Տնօրէնը՝ ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարաններուն:

Ժիրայր՝ նկարագրով հեզահամբոյր էր եւ մարդամօտ, պատրաստ օգնելու բոլորին՝ իր կարողութեան ներած չափով: Չէր վշտացնէր որեւէ մէկը, ոչ ալ կը վիրաւորէր իր շուրջինները: Բարի եւ կարեկից մարդ էր ան, որ աւանդ կանուխ ձգեց այս աշխարհը: Սակայն վստահեմ իր յիշատակը անմառ պիտի մնայ զինք մօտէն ճանչցողներուն մօտ:

Յիշելով ժիրայր Դանիել-

եանը չեմ կրնար նաեւ մոռնալ իր արժանաւոր կողակիցը՝ Զուարթը: Հայկազեան Գոլեմի իմ ուսանողութեան տարիներուն՝ Զուարթ Մարտիրոսեանը (յետագային՝ Զուարթ Դանիելեան) Գոլեմի գրադարանին պատասխանատու խստապահանջ վարիչն էր:

Գիշերօթիկ աշակերտներս՝ իրիկունները կը հաւաքուէինք գոլեմի գրադարանը, դաս սորվելու համար: Բարձրագոյն դասարանի աշակերտները՝ հերթով կը հսկէին մեր վրայ, որ պէսգի կարգապահութիւնը պահուէր եւ աղմուկ չէլլեր: Անշուշտ՝ երբեմն կարգապահութիւնը կը խախտէր եւ «չարածի» ենթական յաջորդ օրն իսկ կ'ստանար Օրիորդ Զուարթի կշտամբանքը:

Առաւօտ մը ես ալ կանչուեցայ Օրիորդ Զուարթի գրասենեակը: Մէկ օր առաջ իրիկուան՝ գրադարանին մէջ, կարգ մը ուսուցիչներու եւ պաշտօնեաներու քալած ձեւերը՝ ներառեալ իրը, կապկած էի: Հսկիչը՝ մատնած էր զիս . . .

Վախով-դողով մօտեցայ Օրիորդ Զուարթի գրասենեակը եւ սպասեցի վճիռիս: Քեզի կը ներեմ էթէ ինչ որ ըրիր երէկ՝ հիմա հոս ալ կրկնես! Ակամայ ենթարկուեցայ վճիռիս եւ գահգահ խնդալով՝ սխրագործութիւնս գնահատեց ու մենք դարձանք զիրար յարգող բարեկամներ:

Պէտք է անվերապահ ըսել որ ժիրայր Դանիելեանի ընդ Զուարթ Մարտիրոսեանի ամուսնութիւնը եղաւ "Made in heaven" միութիւն մը եւ անոնք կազմեցին ընտանեկան երջանիկ բոյն մը ու բախտաւորութեան երկու դուստրերով:

Իսկ Զուարթ Դանիելեանի գոհողութիւնն ու գուրգուրանքը հանդէպ իր ամուսնոյն՝ յատկապէս անոր դժբախտ արկածէն ետք, անմոռնալի է եւ երկնային երախտագիտութեան արժանի:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի ժիրայր եւ հանգիստ ոսկորներուդ՝ օտար այս ափերուն վրայ: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Յ.Գ. Հոս տեղին է յիշել որ Յիշատակի հանդիսութիւնը՝ որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 30 Ապրիլ, 2023-ին, ՀԲԸ Միութեան Փաստինայի համալիրի Պոյաճեան սրահին մէջ, յետ հոգեհանգստեան պօշտօնին, հովանաւորուած է ՀԲԸ Միութեան Վեթերաններու վարչութեան կողմէ:

Թատերատրի Լուսարձակ «Թան էլ Չէ, Փրթած Մաճուկ»

Շրջանէ մը ի վեր Լոս Անճելոսի բեմերուն վրայ կը տողանցեն հայրենի վաստակաւոր արուեստագէտներ եւ անոնց առընթեր խոստումնալի նորայայտ եւ շնորհալի ոյժեր, կան նաեւ յաւակնոտ միջակութիւններ:

Վերջերս բարեկամուհիի մը ազնիւ առաջարկով, 2 տոմս գնած էի, ներկայ ըլլալու Golden Stage Production-ի «Թան էլ չէ, փրթած մաճուկ» ներկայացումին հետաքրքրական ըլլալով գացինք Լանթերման թատերասրահ Ապրիլի 6-ին, 2023, Լա Գանիատա քաղաքին մէջ:

Երբ մուտք գործեցինք, քանի մը տասնեակ հոգիներ կային, չէտոյ այդ ընդարձակ սրահին քառորդը միայն լեցուեցաւ: Բոլորն ալ թատերասէրնե՞ր էին՝ Ոչ: Քովս նստող վայելչակազմ կին մը, խաղարկութեան ընթացքին, գլուխը հակած էր իր բջիջային հեռախօսին, որուն լոյսը անհաստացուց իր շուրջինները աւելի քան մէկ ժամ...: Յետոյ յայտնի եղաւ որ ենթական՝ կարծէք հոն եկած էր իր մէկ ծանօթին բեմական ելոյթը նկարահանելու...:

Այս գրութեան նպատակը դերակատարներն ու անոնց խաղարկութիւնը արժեւորելն ու քննադատելը չէ: Այլ՝ թատերախաղի ընդհանուր բնույթը՝ նիւթն ու գեղարուեստասկան արժեւորումը:

Ներկայացումն սկսաւ ճաշասենեակի տեսարանով, անկապ խօսակցութիւններով, պոռչտուքներով ու տարբեր կերպարներու այցելութիւններով:


Հետաքրքրական էր սուրճի հիւրասիրութիւնը: Սակայն երկարապատում էր բախտագուշակութիւնը եւ բաժակի միջոցով բախտագուշակութիւնն ու երազային երջանկութիւն կռահելու միտումը...:

Յանկարծ նոր արարով մը,



արքայական պալատ մը տեսանք թագաւորական գահ ու անհամ խօսակցութիւններ: Անսպասելի կերպով ալ մուտք գործեցին գնչուներու տարազ հագած պարուհիներ եւ գոյգ մը կիթառ շալկողներ: Անոնք եւրոպական եղանակներով, տարբեր պարեր պարեցին, ստեղծելով անբնական իրավիճակ...: Միջոցառում մը՝ որ անյարիր կ'ընթանար փրկսին հետ: Քիչ ետք, նոյն խաչաբազմ պարախումբի երեւումը միապաղաղութեան նշոյլ մը դարձաւ, թերեւս խաղարկութեան գունաւոր շպար մը տալու մտումով...: Կարծէք բեմագրիչին կողմէ ճիգ մը ակնյայտ էր, հանդիսատեսին հրամցնելու «քիչ մը ամէն բան»... (ուտել, խմել, երգ, պար, պոռչտուք, երազանք, թագաւոր, թիկնապահ, եւ այլն...): Տեղ տեղ ներառնուած էին նաեւ արեւմտահայերէնով արտայայտութիւններ: Անոնք իրենց հասարակ ելոյթներով ու երկխօսութիւններով՝ արատաւորեցին բիեսին կառոյցը: Նշմարելի էր նաեւ ժամանակէն առաջ կարգ մը թատերասէրներու սրահէն դուրս գալը, քանի որ «Թան էլ չէ»...: Կարծէք գաւեշտի երեկոյ էր, կամ պատանի հանդի-

Շար.ը էջ 18



ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
ՀԲԸ Միութեան Լոս Անճելոսի
Վեթերաններու Վարչութիւն
LOS ANGELES VETERANS COMMITTEE

**Հոգեհանգիստ եւ Ոգեկոչում
Ողբացեալ
Ժիրայր Դանիելեանի
Յիշատակին**

**Հովանաւորութեամբ՝
Թեմիս Բարեջան Առաջնորդ
Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի**

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ
ԿԻՐԱԿԻ, 30 ԱՊՐԻԼ 2023-ԻՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅՑ ՄԷՋ,
2215 E COLORADO BLVD. PASADENA, CA 91107

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԷՆ ԵՏՔ
ՀՈԳԵՃԱՇ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ
ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՊՅՅԱՃԵԱՆ ՍՐԱՀԷՆ ՆԵՐՍ
2495 E MOUNTAIN STREET, PASADENA CA 91104

ԲԱՆԱԽՕՍ ԻՐԱԽԱԲԱՆ՝
ՌՈՒԲԷՆ ԱՒՇԱՐԵԱՆ
ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
RSVP ՀԲԸ-Ի ԳՐԱՍԵՆԵԱԿ (626) 794-7942

Ստերիմ Յուշեր Դոկտ. Տենիս Փափագեանի Պանծալի Յիշատակին



ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ

Այս աշխարհին յաւէտ բաժնուեցաւ հայ մը, զոր կարելի է անուանել տիտան մը: Մեր ժամանակակից պատմութեան մէջ ապրող ու գործող հաստաբուն սիւններէն մէկը: Երեւոյթ մը:

Տենիս կրտսերագոյն գաւազն էր Պոլսէն Ամերիկա գաղթած ընտանիքի մը, որ կը պատկանէր հայոց Յեղասպանութեան առաջին սերունդին: Ան ծնաւ Ամերիկայի հարաւային մասի քաղաքի մը մէջ, ուրիշ ան իր հարազատներով Տիթորոյթ պիտի փոխադրուէր: Տիթորոյթ քաղաքն էր որ տեսաւ Տենիսին պատանեկութիւնը, երիտասարդութիւնն ու հասուն տարիքը: Անոր բարձրագոյն ակադեմիական ասպարէզի մէջ, գոլէմական հանդերձաններէն մինչեւ PhD տիտղոսը, University of Michigan Ann Arbor համբաւաւոր համալսարանէն: Այսպէս, եթէ ան գաղթականի յատուկ բազմաթիւ զրկանքներ դիմագրաւելով եւ դէպքերու բարեբախտ դասաւորումով յաջողեցաւ բարձունքներու հասնիլ, ան չգոհացաւ իր ձեռք բերած յաջողութիւններով: Տենիս, անհանդարտ, հետաքրքիր, արկածախնդիր ու հնարամիտ անձ մըն էր: Անոր հետզհետէ ընդարձակուող մտային տեսադաշտը զինք պիտի մղէր դէպի աւելի բարձր հեռանկարներու նուաճումին: Ան պարագլուխ եղաւ ուսանողական կազմակերպութիւններու եւ այդ միջոցաւ ճանաչեց շատ մը այն ժամանակուան պետական հակառակներ, Eleanor Roosevelt, Dwight Eisenhower, John Kennedy, Gerald Ford, Tip O'Neil եւ ուրիշներ: Պետական եւ ակադեմիական ասպարէզներու մէջ, շնորհիւ իր ձեռք բերած բարձր, անձնական շիջումներուն, ան Յուրտ Պատերազմի ամէնէն սաստիկ օրերուն, Ամերիկայի եւ Խորհրդային Միութեան միջեւ նորահաստատ Student Exchange Program-ով ամերիկեան առաջին ուսանողներէն մէկը եղաւ, 1961-ին Moscow State University աշակերտող: Ան նախապէս ռուսերէնին ծանօթ էր, յատուկ լեզուական դասընթացներու հետեւած ըլլալով: Երկու տարի Մոսկուա ուսանելէ ետք, անիկա պիտի ստանար PhD տիտղոս, աւարտական թեզ վերցուցած ըլլալով Ukrainian Nationalism-ը: Ապա, Իւզպէթիստանի մէջ օդնաւակցին արկածէ մը փրկուելով, պիտի վերադառնար Տիթորոյթ: Ոչ միայն պատմութեան եւ Ռուսական նիւթերու մասնագետ, այլ նաեւ ընդհանրա-

պէս Ռուսական եւ Խորհրդային Միութեան վերաբերեալ իր ծանօթութիւններով փնտռուած Խորհրդական մըն էր, նոյնիսկ State Department-ին կողմէ:

Ահա այս էր Տենիս Փափագեանին բազմերես եւ սովորականէն շատ աւելի անդին հասնող տիպարը: Այն ինչ յատկանշական էր Տենիսի մօտ, իր ազգային տեսիլքն էր: Յանդգնութիւնը կուրծք տալու մեր երկրին ու ժողովուրդին դէմ ցցուող մարտահրաւէրներուն: Կոտորակուած, բաժան-բաժան, իրարարամբեժ եւ անգլուխ Սփիւռքին ընկերային-քաղաքական գիտակցութիւնը վեր բարձրացնելու տենչը զինք կը մղէր աշխատանքի, նպատակ ունենալով հասնիլ այն հասարակաց յայտարարին, որով բոլորը մէկ ձայն բարձրացնէին: Այդ կը պահանջէր մեր Յեղասպանութեան ճանաչումին հասնելու պայքարը: Վերջ դնելով ազգային մեր պառակտումին, մեր եկեղեցական երկփեղկումին եւ միջ-կուսակցական եւ ներ-կուսակցական պայքարներուն: Հարկ էր բաց միտքով, առարկայական մօտեցումով, փոխադարձ զիջումով, մէկ ազգային նպատակակէտ հետապնդել: Այդ էր մարմաջը Տենիս Փափագեանին: Այդ բոլորը իրագործելու համար ամէն տեղ էր ան: Ամէն քարի տակէն Տենիս դուրս կու գար: Ան բազմաթիւ սեմինարներ կը կազմակերպէր, զանազան նիւթերու մասին դասախօսութիւններ կու տար, յօդուածներ կը գրէր, ազդեցիկ հայ թէ օտար անձնաւորութիւններու դռները կը բախէր: Ան ունէր իւրաքայտուկ գործելակերպ եւ կ'արտայայտուէր խօսակցական ոճով: պարզ, մեղմ, իմաստալից եւ համոզիչ:

Հիմա, որ այլեւս ան չկայ, իրմէ մեզի կը մնայ ազգային բեղուն վաստակ մը: Վաստակ մը, որ ամէն բանէ աւելի, որպէս ուղեցոյց պէտք է ծառայէ բարձրացող հայ սերունդներուն համար:

Այժմ փորձենք աւելի հանգամանորէն վեր առնել Տենիս Փափագեանին կատարած ազգային ծառայութիւնը, թուելով կարգ մը իրագործումներ, որոնց մէջ ինք մեծ ներդրում ունեցաւ:

ա) 1970-ական թուականներուն, երբ Armenian Assembly-ի հիմնադիր-գործադիր վարիչն էր Տենիս Փափագեան Washington-ի մէջ, ան շարք մը այլ ազգային գործիչներու աջակցութեամբ, առիւծի բաժինը ունեցաւ Ամերիկայի Ներկայացուցչական Տան մէջ Armenian Genocide Resolution-ը

իրականացնելու աշխատանքին կապակցութեամբ: Այս մէկը հակառական քայլ մըն էր Հայկական Յեղասպանութեան ճանաչումի ճամբուն վրայ, դուռը բանալով յետագային Նախագահ Պայտրոնի օրով Ամերիկայի Միացեալ Նահանգներուն կողմէ պաշտօնապէս Հայոց Յեղասպանութեան ճանաչումին:

բ) Լիբանանեան Քաղաքացիական Պատերազմի դժնդակ օրերուն, Տենիս Փափագեան սատարեց Խալիլ Պէտէվիի եւ Պուրճ Համուտի աղիտեալ հայ ընտանիքներու օգնութեան համար USAID-ի կողմէ յատկացուած մէկ միլիոն տոլարի օժանդակութեան ձեռք բերումին: Այդ օրերուն սղաճը շուրջ քսան առ հարիւր էր եւ դրամատուները փոխատուութեան շատ բարձր տոկոս կը պահանջէին: Տենիս Փափագեան եւ Սեթ Մոմճեան մեծ դեր ունեցան այդ օժանդակութեան ապահովումին ուղղութեամբ: Տենիս Փափագեան նաեւ պիտի յաջողէր համոզել Յիւսէյն Նախագահ Ալեք Մանուկեանը, որպէսզի Հ.Բ.Լ.Մ. ստանձնէր ամերիկեան կառավարութեան առջեւ Fiscal Agent-ի պատասխանատուութիւնը, վերոնշեալ յատկացումի յանձնարարութեան համար: Առ այդ, Ալեք Մանուկեան Ամերիկայի մէջ կազմուած Ad Hoc Supervisory Board-ի գործադիր վարիչի (Program Director) պաշտօնին նշանակեց Տենիս Փափագեանը, իսկ նոյն նպատակով Լիբանանի մէջ գործող Գործադիր Յանձնարարութեան համա-ստեղծարար նշանակեց սրտաբան բժիշկ Միլեանը եւ զին այս գրութեան հեղինակը՝ Փանոս Թիթիգեան: Երեք հայ բարեսիրական կազմակերպութիւններ, Հ.Բ.Լ.Մ., Հ.Օ.Մ. եւ Ա.Հ.Ա.Մ. երկուքական ներկայացուցիչներով մաս կազմեցին Գործադիր Յանձնարարութեան:

Հակիրճ կերպով նշենք թէ այդ յատկացումով ստեղծուած փոքր ձեռնարկատիրական փոխատուութիւններու դրութեամբ (Revolving Fund), մեծ թիւով ընտանիքներ կրցան իրենց տնտեսութիւնը բա-

րելաւել, ինչ որ առաջ քը առաւ, կը խորհրմ, զանգուածային արտագաղթին: Արդար պիտի ըլլայ նաեւ չիչել, թէ գուիցերիացի Hans Schellenberg նման ծրագիրներու վերաբերեալ իր կազմակերպական փորձառութեամբ մեծապէս օգտակար հանդիսացաւ մեզի սկզբնական շրջանին: Բնականաբար USAID-ին մեծապէս գոհ մնաց ծրագրի յաջող գործադրութենէն:

գ) Տենիս փափագեանի կարեւոր իրագործումներէն մէկն էր նաեւ Dearborn-ի համալսարանէն ներս հիմնադրութիւնը հայկական հետազոտական կեդրոնի մը, որ կոչուեցաւ Armenian Research Center, University of Michigan, Dearborn: Անվարան կրնանք ըսել, որ այդ եզակի ակադեմիական հետազոտական կեդրոնին ստեղծումը առանձնապէս Տենիսին յղացումն էր: Այդ կեդրոնը գործեց իր տնօրինութեամբ մինչեւ իր գործէ քաշուելը, որմէ ետք, պատմբան գիտաշխատող Դոկտ. Արա Սանճեան ներկայիս կը վարէ ամպիոնի տնօրինութիւնը, ըլլալով նաեւ պատմութեան դասախօս համալսարանէն ներս: Ի դէպ, Տենիս Փափագեանի եւ Վարդանանց Ասպետներու ճիւղերով, էտուրտ եւ Հելեն Մարտիրոսեան հիմնադրամի, Սուրէն Ֆէսճեանի, Տօքթ. Արամ Ճանճիկեանի եւ այլոց նուիրատուութեամբ իրականացած հետազոտական կեդրոնի գրադարանը, 1985-ին պիտի կոչուէր Edward and Helen Mardigian Library:

Տենիս Փափագեանի մահով ես կը կորսնցնեմ մեծ բարեկամ մը, որուն հետ մեր սերտ կապերը կը սկսին Լիբանանեան Քաղաքացիական Պատերազմի վաղ օրերէն: Իր մահուանէ շաբաթներ առաջ ան հեռաձայնեց ինձի եւ ի միջի այլոց, խօսեցաւ իր նոր հրատարակած յուշագրութեան մասին: Իրեն յատուկ խօսակցական ոճով գրուած այդ գիրքը ճոխ է իր բովանդակութեամբ: Նոր սերունդներուն հա-

Շար.ը էջ 19

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

AEBU SCHOLARSHIP PROGRAM

APPLICATIONS NOW OPEN
Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

626•344•7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Ս. Ջատիկի Տօնակատարութիւն Ա. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ Դպրոցի Մէջ



1 Ապրիլ 2023, Շաբաթ օր, Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը յատուկ յայտագիրով մը դիմաւորեց Ս. Յարութեան տօնը: Ծրագիրին ներկայ էին աշակերտներ, ծնողներ, մեծ հայրեր եւ մայրեր, ինչպէս նաեւ դպրոցի աշխատանքին համակրանք ունեցող հիւրեր:

Մեծի խօսքը այսօր կը պառկի, վաղը կ'արթննայ

Յայտագիրը սկսաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Աշակերտները բեմի վրայ, երգի ուսուցչուհի Մարալ Քիւրտեանի ղեկավարութեամբ երգեցին հոգեւոր երգեր: Ապա Հայր Երեմիա Աբգարեանի մատուցմամբ եւ դպրոցի աշակերտներու սարկաւազութեամբ կատարուեցաւ արարողութիւնը: Հայր Երեմիան հաղորդու-

կերտները ժիր ձայնով երգեցին «Ինչ աղուոր է Ջատիկ տօնել» մանկական երգը ու յանկարծ, ուստոստելով, բոլորին ցնծութիւն եւ ծիծաղ պարգեւելով սրահ մտաւ դարնան սիրուած նախանշանը՝ սիրունիկ նապաստակ մը: Օրիորդ նապաստակը երգեց, պարեց եւ հաւկթախող խաղաց երեխաներուն հետ: Այդ հաճելի միջոցէն յետոյ, նապաստակը բոլորին հրաժեշտ տուաւ խոստանալով, որ տարի մը յետոյ կը վերադառնայ:

Ես յաղթեցի, հա՛յր սուրբ Հայր Երեմիա Աբգարեանը օրհնեց սեղանը եւ «Ճաշակեցուք»ը միաբերան հնչեց սրահի մէջ: Սիրոյ սեղանը, գոր բոլորը պիտի վայելէին, առատաձեռնօրէն պատրաստուած էր ծնողներու եփած, բերած տեսակաւոր ուտելիքներով,



թիւն տալէ առաջ, աշակերտներուն բացատրեց, թէ ինչ կը ստանան, ինչ է հացի եւ գինիի իմաստը եւ ինչ միտքով եւ պատրաստութեամբ պէտք է որ մօտենան սկիհին: Հայր սուրբը իր խօսքի մէջ ծնողներուն վստահեցուց, թէ փոքրիկներուն լսած իւրաքանչիւր հոգեւոր բարդ պատգամ եւ գաղափար, ինչ փոյթ, թէ այսօր լուռ պիտի պառկին երեխայի ականջին եւ սրտին մէջ, բայց անոնք օր մը, անկասկած պիտի արթննան ու պիտի վերագտնեն իրենց արժէքը: Հաղորդութիւն բաշխելու պահուն երգչուհի Մ. Քիւրտեանը հոգեւոր երգերու սրտագրաւ շարան մը մենակատարեց՝ սրահին տալով խորհրդաւոր մթնոլորտ:

Ցնծութիւնը ուստոստելով եկաւ Օրը դարձաւ տօնական երբ Տունայեանց սրահի մէջ սկսաւ Ս. Ջատիկուայ հանդիսութիւնը: Աշա-

բազմազան քաղցրեղէններով եւ անշուշտ գունազեղ հաւկթիւններով: Հայր սուրբը այս առիթին օգտուելով, ինքն ալ մանուկ մը դարձաւ, փոքրիկներուն հետ խաղաց հաւկթախող, հեղ մը յաղթեց, հեղ մըն ալ ձաթած հաւկթով մնաց:

Տաղանդաւոր նկարիչներ Այս տարի դպրոցը աշակերտներուն համար կազմակերպած էր կաւիճով Ջատիկ ներկելու ժամ մը: Ամէն աշակերտ իր նախասիրած գոյնը բռնած շտապեց պարտէզ ու կարճ միջոցին բակի մէջ յայտնուեցան գոյնգոյն ճուտիկներ, արեւներ, հաւկթիւններ եւ նապաստակներ: Մեղք, որ Երկուշաբթի օր սպասուող քանի մը կաթիլ անձրեւը պիտի բաւէ բոլորը ջնջելու: Օրը վերջացաւ սիրալիր, ջերմ գրոյցներով եւ լուսանկարներու մէջ յաւերժացնելով օրուան ընտիր պահերը:

Ծաղկազարդի Մանկական Բացառիկ Փառատօնը Կլենտելում



2023 թ.-ի Ապրիլի 2-ին, Կլենտէյլի «Վերտուկօ» այգում տեղի ունեցաւ նախադէպը չունեցող մանկական փառատօն: Հայ մշակույթի փառաբանութեանը միահիւսուել էր օրուայ կրօնական՝ Ծաղկազարդի խորհուրդը՝ իր մէջ ներառելով օրհնութիւն, սէր ու միութիւն: Տօնախմբութեան գլխաւոր կազմակերպիչն էր յայտնի լրագրող, ազնիւ մտաւորական Նանէ Աւագեանը, որն իր մտայղացումը կեանքի էր կոչել ԱՄՆ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ:

պարների, յատկապէս նորաբաց տիկնիկային թատրոնի «Անի տիկնիկ»-ի շուրջ ստեղծուած խանդավառութիւնը:

Յովնան սրբազանի կարգադրութեամբ այգում մանուկների օրհնութեան կարգ կատարեց Հոգեշնորհ Տ. Երեմիա վրդ. Աբգարեանը: Արեւմտեան թեմից իրենց մասնակցութիւնը բերին «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի Յ-րդ դասարանի տաղանդաւոր աշակերտները՝ գլխաւորութեամբ արհեստավարժ ուսուցչուհի, տիկնիկ Անահիտ Ամիրեանի: Նրանք հանդէս եկան Յովհաննէս Թուման-



Ողջ օրուայ ընթացքում չդադարեց բազմահազար մանուկների հոսքը դէպի՝ այգի՝ այն վերածելով իւրօրինակ Հայաստան աշխարհի: Իրենց մասնակցութեամբ փառատօնը զարդարեցին համայնքի գրեթէ բոլոր յայտնի մշակութային օճախները՝ երաժշտական դպրոցները, երգչախմբերը, պարարուեստի ներկայացուցիչները, նշանաւոր արտիստներն ու համայնքի ղեկավարները: Այգու ողջ երկարութեամբ ձգուած էր նաեւ հայկական տաղաւարները, որոնց օգտակար նշանակութիւնն ու ներկայութիւնը համեմունք էր օրուայ խորհուրդը: Հետաքրքիր էր մանկական կեր-

եանի «Բերիկենդանը» հեքիաթի փոքրիկ բեմադրութեամբ, ինչպէս նաեւ «Հայրենիքիս Հետ» բանաստեղծութեան խմբակային արտասանութեամբ: Յատուկ տաղավարով էր ներկայացուած թեմի «Երեխաների Ձայնը» (Sound of children) երաժշտական, մշակութային միութիւնը՝ գլխաւորութեամբ ազնիւ տիկնիկ Սիրվարդ Կառլքճեանի, որի աշակերտները եւս հարստացրեցին օրն իրենց անզուգական երգերով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԳՈՒՄՐՈՒՅԵԱՆ
ԱՄՆ Արեւմտեան թեմի շաբաթօրեայ դպրոցների հոգեւոր տեսուչ

Ներքաղաքական Ստատուս-Քուոյի

Շարունակում էք 2-էն

դրա յաղթահարման անհրաժեշտությունը: Ամբողջ հարցն այն է, որ Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքում գոյություն ունի օբյեկտիվ աշխատանքի ճգնաժամ: Ի՞նչ է դա նշանակում, կը հարցնեն շատերը:

Այդ ձեւակերպման ներքոյ թերեւս տեղադրում է այն իրողությունը, որ հասարակական-քաղաքական կեանքում որեւէ դերակատար գերազանցապես փնտռում է մէկ այլ սուբյեկտի, որպէսզի դրա հանդէպ դիրքաւորումով իմաստաւորի սեփական տեղն ու դերը հանրային քաղաքական դաշտում: Եթէ դասական իմաստով խոշոր հաշուով այդպէս է ձեւաւորում ընդդիմութիւն-իշխանութիւն մրցակցութիւնը, ապա Հայաստանի պարագայում դեռ շատ մեծ ճանապարհ կայ քաղաքական դասական իրողութիւնների հաս-

նելու համար, ու այդ ճանապարհը սկսելու համար պէտք է հենց կարողանալ դուրս գալ դասական ընկալումներից եւ գոյություն ունեցող ստատուս-քուոյի այլընտրանքի ձեւաւորման գործում «մոռանալ» այդ ստատուս-քուոն, նաեւ մոռացութեան տալ հանրութեան մօտ: Հասկանալի է, որ խօսքը պատկերաւոր, յարաբերական իմաստով է, սակայն լոկ այդ կերպ է հնարաւոր ձեւաւորել քաղաքական նոր բովանդակութիւն ու միջավայր, որը կը դառնայ եղածին «անկախ այլընտրանք», այսինքն այլընտրանք, որը իր գոյութեամբ բոլորովին կախում է եղածից: Սա է այսօր հայկական քաղաքականութեան արդիականացման կամ կերտման հիմնախնդիրը, որը պահանջում է մեր քաղաքականութեան համար չտեսնուած մի բան՝ երկարաժամկէտ ռազմավարութիւն:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հայաստանը Պէտք է Միանայ

Շարունակում էք 2-էն

րակայաններում՝ ատոմային, հիդրոէլեկտրակայաններում: Հայաստանի կառավարութեան նպատակն է մինչեւ 2030-ն ունենալ 12 մլրդ. կՎտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրութիւն եւ միեւնոյն ժամանակ վերականգնող էլեկտրաէներգիայի արտադրութեան մասնաբաժինը դարձնել 15 տոկոս:

Ներկայում Հայաստանում կառուցւում է երկու խոշոր արեւալին էլեկտրակայան՝ 55 ՄՎտ հզօրութեամբ կայան Գեղարքունիքում եւ 200 ՄՎտ հզօրութեամբ կայան Արագածոտնում: Վերջինը Հայաստանի պետական հետաքրքրութիւնների ֆոնտի եւ Ապու Տապիի Մաստար ընկերութեան 174 մլն. տոլար արժողութեամբ համատեղ նախագիծ է: Այս նախագիծերով Հայաստանի Հանրապետութեան կա-

ռավարութիւնը վերահաստատում է իր յանձնառութիւնը՝ ընդլայնելու Հայաստանում վերականգնող էներգիայի ոլորտը:

Հայաստանն ունի ԵՄ վերականգնող էներգիա արտահանող պետութիւն դառնալու ներուժ: Հայաստանի մասնակցութիւնը Սեւ Օղակի յատակով Վրաստանից Ռուսաստանի արտադրական մալուխի կառուցման նախագիծին կը նպաստի երկրի տնտեսական զարգացմանը: Դա նաեւ կը խթանի տարածաշրջանային տնտեսական համագործակցութիւնը, որն անհրաժեշտ է Հարաւային Կովկասում կայունութեան եւ անվտանգութեան ապահովմանը: Այն կ'ամրապնդի ԵՄ ազդեցութիւնը տարածաշրջանում եւ լիովին համահունչ կը լինի Հարաւային Կովկասում ԵՄ ռազմավարութեանը:

«ՍԻՎԻԼՆԵԹ»

«Թան էլ Չէ, Փրթած Մածուն»

Շարունակում էք 15-էն

սատեսի երեւանեան թատրոնի աղաւաղումը կրկնօրինակը...:

Գալով դերակատարներուն՝ անոնք իրենց կարելին ըրին ցուցադրեով բեմական շնորհ ու տաղանդ: Մեր թեյադրանքը պիտի ըլլար որ օրուան տնօրէն (producer) Գրիգոր Ալթունեանը եւ թատերագիրը (play writer) Սուգաննա Ալթունեանը, որոնք որոշ փորձառութիւն ունին այս բնագաւառին մէջ, HAYQ թատերախումբին հետ համագործակցաբար, իրենց ներուժն օգտագործէին, առաւել մշակուած նոր ծրագիրներ ներկայացնելով, օգտակար հանդիսանալու

այս գաղութի գեղարուեստասէր հասարակութեան, յատկապէս երիտասարդութեան:

Արդարեւ, հասակ առնող սփիւռքահայ նոր սերունդը խիստ կարիքն ունի մեր մշակութային հարուստ ժառանգութեան ծանօթանալու, ինչպէս նաեւ պահպանելու մեր գողտրիկ լեզուն՝ ազգային դիմագիծը եւ ամբողջովին նուիրուի հայակերտումի վսեմ գործին: Այս բոլորին մէջ կարեւոր առաքելութիւն մը վիճակուած է նաեւ հայ թատրոնին, որուն վրայ կուտակուելու սկսած մութ ամպերը՝ փարատումի կը կարօտին...:

Գ. Մ.

Տառապանքի Ուղիներով Յաւերժութիւն

Շարունակում էք 14-էն

խումբ: Անձնական օրինակով ցոյց տուեց թէ որքան հմայիչ ու դիւրամբուն էին են մեր հոգեւոր երգերն ու շարականները եւ գեղեցիկ բարիտոնով կատարեց «Տէր կեցո», «Ուրախ լեք», «Տէր ողորմեայ», «Սուրբ, սուրբ», «Տէր կեցո», «Ով գարմանալի», «Ձանճառելի լոյս մայր», հոգեւոր եւ հայրենասիրական «Գարուն», «Կիրիլիա», «Հայաստան», «Կռունկ», «Ով հայրենայց պսակադիր» երգերը:

Խորէն Պալեանը իր երգեցողութեամբ մի նոր աշխարհ բացեց հայ ժողովրդի եւ, որ աւելի կարեւոր է՝ երաժիշտների եւ երաժշտասէրների հզոր բանակի առջեւ: Ժողովուրդը խելահողորէն ընդունեց նրա համերգային ելոյթները: Լայնածաւալ մամուլը գովեստի եւ զնահատանքի խօսքեր չխնայեց Խորէնի համերգների մասին: Ահա թէ ինչ է գրում «Երեկոյեան Երեւան» թերթը Խորէն Պալեանի համերգի մասին. «Խորէն Պալեանը նոր է բեմ բարձրացել, բայց կարճ միջոցն էլ բաւական եղաւ հոգեխօս երգով սրտեր նուաճելու համար... Պալեանի կատարումը իւրօրինակ է, թարմ ու արտայայտիչ, աչքի է ընկնում անկեղծ ոգեւորութեամբ, յուզական յագեցուածութեամբ, ջերմ սիրով, մանաւանդ՝ սիրով, որ իրեն զգալ է տալիս ամէն մի տողի, ամէն մի հնչիւնի մէջ»: (Ա. Մարդոյեան, 28 Յունիսի, 1966 թ.):

Որպէս մասնագէտ շարակաւնագէտ, Խորէն Պալեանը միակն էր, եզակին,- գրում է Երուսաղէմ Տէր-Խաչատրեանը:

Գրաբար լեզուի գերազանց մասնագէտ էր Խորէն Պալեանը: Համալսարանի նրա ուսանողները անյազ հետաքրքրութեամբ էին լսում նրա դասախօսութիւնները:

«Հայոց մեծ հանճար Մեսրոպ Մաշտոցը,- ասում էր նա,- հրաշակերտեց մեր աննման այբուբենը եւ գրեց առաջին հայատառ նախադասութիւնը՝ «Ճանաչել գիմաստութիւն եւ գիւրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Աւելացնեմ. Սողոմոն Իմաստունի «Առակաց գրքի» առաջին տողերն են սրանք: Եկէք չմոռանանք, որ առաջին գիրքը, որ

թարգմանուել է հինգերորդ դարում՝ գրերի գիւտից յետոյ, Աստուածաշունչ մատեանն էր

Խորէն Պալեանը իր ամբողջ կեանքը նուիրեց գրաբարը ժողովրդի մէջ տարածելու սրբազան առաքելութեանը, պեղեց, վերծանեց աւելի քան 1800 շարական, որոնցից աւելի քան հարիւրն՝ անգիր գիտէր:

Իր կեանքի աւարտին լաւ է ասել իր ազգին պանծացնող միակն ու անկրկնելի Հանճարը.

Տառապեցի, սակայն ինչ փոյթ, Երբ վշտերս մեռան ամէն Գիտեմ, ինձ քո դուռն է տանում

ճանապարհը յաւերժութեան: Իմ այս յօդուածում ես գրեթէ չանդրադարձայ մեր շարականների եւ հոգեւոր երգերի երեք խոշորագոյն հսկաներ Սահակ Պարթեւին, Ներսէս Շնորհալիին եւ Գրիգոր Նարեկացիին: «Մեղաւորը» ազնուագոյն մարդ, բացառիկ տաղանդի տէր Խորէն Պալեանն է, որը խոշոր գիտականին յարիւր մի այնպիսի աշխատութիւն երեւան հանել, որ այս յօդուածի սահմանները չեն ներում նրանց անդրադառնալ: Ապագային, եթէ Աստուած կամենայ՝ ես առանձին յօդուած կը գրեմ նրանց մասին:

Միայն ապշել կարելի է, թէ ինչպէս է որ ժամանակի մեծ համբաւ վայելած Երեւանի պետական համալսարանը որեւէ որեւէ կոչում չի շնորհել խոշոր գիտնական Խորէն Պալեանին:

...Հին շարականներից եւ հոգեւոր երգերից օգտուել են բազմաթիւ հայ կոմպոզիտորներ, որոնցից մեզ յայտնի երաժիշտներն են՝ էմին Արիստակէսեանը՝ «Սահակ Պարթեւի հինգ շարականները», Ալ. Յարութիւնեանը՝ «Գթայ Տէր», Առնօ Բաբաջանեանը՝ «Յորժամ», Էդգար Յովհաննիսեանը՝ «Անտունի» եւ «Մարմար» բալետներ, Հենրիկ Անասեանը՝ «Տասներկու շարական» երգչախմբի եւ սիմֆոնիկ նուագախմբի համար», չորս հոգեւոր երգ՝ սենեկային նուագախմբի հետ՝ նուիրուած երգչուհի Մարիետա Անասեանին: Սփիւռքահայ կոմպոզիտորներից Ալան Յովհաննիսյանն ու Համբարձում Պերպերեանը:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈԳԻ ՇԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՅԱԶԴ



ԺԱՆԷԹ ՇԻՐԻՆԵԱՆ ԱՐԹՒՆԵԱՆ
1938-2023

Խոր ցաւով կը գուժենք մեր մօր, քրոջ, մեծ մօր եւ հարազատին՝ ԺԱՆԷԹ ՇԻՐԻՆԵԱՆ-ԱՐԹՒՆԵԱՆ-ի մահը որ պատահեցաւ Ապրիլ 2, 2023-ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Ապրիլ 14, 2023, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ՝ առաւօտեան ամբ 11:00ին 2215 Colorado Avenue Pasadena, CA: Իսկ թաղման կարգը տեղի պիտի ունենայ Ալթադենայի Mountain view գերեզմատան մէջ, 2400 North Fair Oaks, Altadena CA 91101՝

Սգակիրներ՝ Դուստրը՝ Մարալ Գաթարճեան եւ զաւակները ճոյս եւ Միրնա Զաւակը՝ Յակոբ եւ ձուլի Շիրինեան եւ զաւակը Ժանէթ (Յունաստան) Եղբայրը՝ Սարգիս Շիրինեան Եղբայրը՝ Հրայր Շիրինեան

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Յաւով իմացանք Պէյրութի Հ.Մ.Մ.-ի ֆուլթայրի խումբի լաւագոյն խաղցողներէն՝ ՄԱՅՔ (MIG) ԹՈՐՈՍԵԱՆԻ մահը, յետ կարճատեւ հիւանդութեան: Այս տխուր առթիւ Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.-ի վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:

Դոկտ. Տենիս Փափագեան

Շարունակուած էջ 16-էն

մար ուղեցոյց մը, թէ ինչպէս եւ որքան կարելի է ծառայել մեր ժողովուրդին եւ հայրենիքին, որոնք օրհասական պահեր կ'ապրին ներկայիս:

Տենիս Փափագեանի չիշատակին ձօնուած այս սրտաբուխ խօսքերս անկատար պիտի ըլլան եթէ չ'անդրադառնամ նոյնպէս բացառիկ արժէք ներկայացնող իր սիրած տիկնոջ՝ Մէյրիին մասին: Ան ահադեմական բացառիկ դիրքերու հասած հայուհի մըն է: Եղած է նախագահը South Connecticut State University-ին, ինչպէս նաեւ San Jose State University-ին: Աւելին, ան մեծ ազգասէր եւ հայրենասէր անձնաւորութիւն մըն է: Ան իր այդ շնորհները ժառանգած է իր նոյնպէս ազգասէր ծնողներէն՝ Տէր եւ Տիկին Արշակունիներէն:

Ես երբէք չեմ մոռնար, երբ իր եւ Տենիսի հրաւերով, South Connecticut գացի իր inaugural ceremony-ին ներկայ գտնուելու համար: Անձրեւոտ օր մըն էր: Հանդիսութենէն քառորդ ժամ առաջ ան խառնուեր էր խումբ մը աշակերտուհիներու հետ, որոնք ուրախ գուարթ կը գրուցէին իրարու հետ: Կարծէք ինքն ալ անոնցմէ մէկն էր: Իր այդ պարգուութիւնն ու համեստութիւնը անջնջելի հետք ձգած են իմ վրաս: Այդ անձրեւոտ օրը, ես եւ Մէյրիին կողքի ելեկտրական փոքր կառքով մը դիմացի շէնքը գացինք, ուր տեղի պիտի ունենար իր համալսարանի նախագահ ընտրութեան պաշտօնական արարողութիւնը: Սրահին մէջ իրենց ահադեմական համագա-

եստներով զգեստաւորուած բազմութիւն մը թափօր կազմած էր: Տասնեակ մը պետական եւ ահադեմական անձնաւորութիւններ դրուատեցին Մէյրիին արժանիքները: Ապա խօսքը Մէյրիինն էր: Ան իր խօսքին մէջ, ի միջի այլոց, հետեւեալը ըսաւ.

«Նոյեան տապանը Արարատ Լեռան գագաթը հանգչեցաւ փրկութեան համար: Ուստի ձեզմէ իւրաքանչիւրին մէջ հայկական բան մը կայ...»

Անակնկալի եկայ եւ հպարտութեան ջերմ զգացում մը համակեց զիս: Այդ հանդիսութենէն ետք իրենց տունը գացինք ճաշի: Մեզի հետ էր նաեւ Երեւանի Պետական Համալսարանէն բարձրաստիճան պաշտօնեայ մը: Հոն էր նաեւ Մէյրիին մայրը, ազնուական հայուհի Տիկին Արշակունին: Այդ օրն իսկ, Մէյրիին երկու համալսարաններու միջեւ համագործակցութեան ծրագիր մը մշակած էր արդէն, սերտ յարաբերութիւն հաստատելու նպատակով:

Ես այդ բոլորը չեմ մոռցած: Գիտեմ սիրելի Մէյրի, ի՞նչ մեծ սիրով կապուած էիր ամուսինիդ: Նաեւ գիտեմ, թէ դուն որքան կը քաջալերէիր զինք որ շարունակէ իր ազգօգուտ մեծ գործը:

Յարգանք ու պատիւ իրեն: Տիկինս Անահիտը, զաւակներս եւ ես, խորապէս կը բաժնենք քու վիշտդ:

Քեզի, սիրելի Մէյրի, կը մաղթեմ երկար եւ առողջ կեանք: Դուն դեռ շատ բան ունիս տալիք մեր ազգին ու հայրենիքին, քու փրոֆէշընը փորձառութենէդ եւ ահադեմական հմտութենէդ:

Շնորհակալիք

Հանգուցեալ ՅԱԿՈՒ ԽՊՈՅԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Խպոյեան ընտանիքը իր շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր անոնց որոնք այցելութեամբ, հեռաձայնով, ծաղիկեպսակով կամ փոխան ծաղիկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին:

Շնորհակալութիւն կը յայտնեն նաեւ «Մասիս» շաբաթաթերթին եւ Հ.Մ.Մ.-ի վարչութեան:

Առ այդ եղան հետեւեալ նուիրատուութիւնները՝

«Մասիս» Շաբաթաթերթին

- Տիկ. Անահիտ Խպոյեան \$500
- Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Անժելա Խպոյեան \$500
- Տէր եւ Տիկ. Սաֆօ եւ Նորա Աջապահեան \$300
- Տէր եւ Տիկ. Սեւան եւ Շողիկ Եագճեան \$150
- Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Լորի Թաթուլեան \$200
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեան \$300
- Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Լենա Մանուկեան \$200
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեան \$200
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրոյլեան \$100
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեան \$100
- Տիար Աւետիս Պօղոսեան \$100
- Տիար Յովսէփ Աճէմեան \$100
- Օր. Շաքէ Առաքելեան \$50
- Տիկ. Մայրանուշ Սողոմոնեան \$100
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուզճեան \$200

Հ.Մ.Մ.-ին

- Տիկ. Անահիտ Խպոյեան \$500
- Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Անժելա Խպոյեան \$500
- Տէր եւ Տիկ. Սեւան եւ Շողիկ Եագճեան \$150
- Տէր եւ Տիկ. Սինան եւ Սեդա Եագճեան \$100
- Տօքթ. եւ Տիկ. Հմայեակ եւ Յոլինէ Մաթոսեան \$200
- Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն եւ Սեդա Մաթոսեան \$200
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Մարինա Մաթոսեան \$100
- Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան \$200
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սալբի Պիլանճեան \$100
- Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Լենա Մանուկեան \$100
- Տէր եւ Տիկ. Ասատուր եւ Լենա Գրիգորեան \$100
- Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրոյլեան \$100
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան \$100
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անիթա Թիւթիւնճեան \$100
- Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան \$200
- Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեան \$200
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Մարգարեան \$100
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան \$150
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան \$100
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան \$100
- Տիար Յովսէփ Աճէմեան \$100
- Mr. Joseph and Sona Lafaro \$100
- Ռոզալին Սէթեան \$60

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----

Address:-----

City:----- State:----- Zip Code:-----

Country:-----

Tel:-----

Email:-----

Էրլինգ Զոլանտ Փրեմիեր Լիգայի Մրցաշրջանին 30 Կոլ Նշանակած 10-րդ Ֆուլբոլիստն Է Պատմութեան Սէջ

Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Ստոքսիթհոլմ» դէմ նշանակած 2 կոլերով 22-ամեայ Նորուեկլայցի յարձակող էրլինգ Զոլանտ Փրեմիեր Լիգայի պատմութեան մէջ դարձաւ 10-րդ ֆուլբոլիստը, որ յաջողեցաւ մէկ մրցաշրջանին նշանակել առնուազն 30 կոլ: Խաղը աւարտեցաւ «Մանչեսթըր Սիթիին» յաղթանակով՝ 4:1 արդիւնքով:



Փրեմիեր Լիգայի մէջ առաջին տարին մասնակցող էրլինգ Զոլանտ այդ ցուցանիշին հասաւ 27 խաղի ընթացքին:

Տասնեակին մէջ են նաեւ Էնկի Բոուլը (34 կոլ, 1993-1994 թուականներու մրցաշրջան), Ալան Շիրերը (31 կոլ, 1993-1994, 34 կոլ, 1994-1995, 31 կոլ, 1995-1996), Քեւին Ֆիլիպսը (30 կոլ, 1999-2000), Թիերի Անրին (30 կոլ, 2003-2004), Կրիշտիանու Ռոնալդուն (31 կոլ, 2007-2008), Ռոպին վան Պերսին (30 կոլ, 2011-2012), Լուիս Սուարեսը (31 կոլ, 2013-2014), Մոհամետ Սալահը (32 կոլ, 2017-2018) եւ Հարի Բեյնը (30 կոլ, 2017-2018):

Էրլինգ Զոլանտ այս մրցաշրջանին նաեւ 10 կոլ նշանակած է Ախոյեաններու Լիգայի մէջ, 3 կոլ՝ Անգլիոյ գաւաթի խաղերուն եւ 1 կոլ Անգլիոյ Լիգայի Գաւաթի մրցաշարքի ընթացքին: 44 կոլով ան կրկնած է եգիպտացի Մոհամետ Սալահի եւ հոլանտացի Ռուդ վան Նիստելրոյ մրցանիշը Անգլիոյ մէջ:

«Լիվերփուլ» Եւ «Արսենալ» Զաւասար

Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» հիւրընկալեց փոխախօյեան «Լիվերփուլին»: Արդիւնքը՝ 2:2

«Արսենալ» 73 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն», որ մէկ խաղ քիչ կատարած է: «Լիվերփուլ» 29 խաղէն յետոյ 44 կէտով 8-րդն է:

«Պարսելոնան» Յաղթեց Եւ 15 Կէտով Առաջ Է «Ռեալէն»

Սպանիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին առաջատար «Պարսելոնան» հիւրընկալեց յետնապահ «Էլչէին» եւ յաղթեց 4:0 արդիւնքով:

Տուպի հեղինակ դարձաւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին: Ա «Պարսելոնան» 71 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 15 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Ռեալէն», որ մէկ խաղ նուազ կատարած է:

«Ռեալ» Պարտուեցաւ Սեփական Դաշտին Վրայ

Սպանիոյ առաջնութեան 28-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» Մատրիտի մէջ մրցեցաւ «Վիլյառեալի» հետ: Իտալացի Կառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը պարտուեցաւ 2:3 արդիւնքով:

Հիւրերէն տուպի հեղինակ դարձաւ նիճերիացի յարձակող Սամու Զուկիեզէն:

Արքայական խումբը այժմ 59 կէտով երկրորդն է եւ 15 կէտ ետ է առաջատար «Պարսելոնայէն», որ մէկ խաղ նուազ կատարած է:

Մեսիի Եւ Ռամոսի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Նիցային» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:



Կոլերը նշանակեցին աշխարհի ախոյեան Արթենթինի հաւաքականի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսին եւ 37-ամեայ սպանացի պաշտպան Սերխիօ Ռամոսը:

ՊՍԺ-ն 69 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Լանսէն»: «Նիցան» 8-րդն է՝ 45 կէտով:

Էդուարդ Բագրինցելը Զայկական Անձնագիր Ստացած Է Եւ Պատրաստ Է Միանալու Զայաստանի Զաւաքականին

Սլովակիան «Տուպիցա» ակումբի 20-ամեայ ֆուլբոլիստ էտուարտ Բագրինցելը յայտնած է, որ հայկական անձնագիր պիտի ստանայ ու պատրաստ է շուտով միանալու Հայաստանի ազգային հաւաքականին:



Ֆուտպոլիստը այդ մասին յայտնած է Metaratings-ին տուած հարցազրոյցի ընթացքին: «Նոյեմբերին ես փաստաթղթեր յանձնած էի անձնագիր ստանալու համար: Ինձ զանգահարեցին Հայաստանի ֆուլբոլի ֆետերացիայէն եւ յայտնեցին, որ իմ անձնագիրը պատրաստ է: Շուտով ես հայկական անձնագիր կը ստանամ եւ պատրաստ կ'ըլլամ նորամուտս նշել Հայաստանի ազգային հաւաքականին մէջ: Ես շատ ուրախ եմ, անհամբերութեամբ կը սպասեմ եմ այդ պահին»,- ըսած է Բագրինցելը:

Էդուարդ Բագրինցելը Ռուսական ԲԿՄԱ ակումբի սան է, հանդէս եկած է Ռուսաստանի երիտասարդական հաւաքականի կազմէն, Ռուսաստանի տարբեր տարիքային հաւաքականներու կազմէն մասնակցած է Եւրոպայի առաջնութեան որակաւորման խաղերուն:

Զայաստանի Ֆուլբոլի Ազգային Խումբը ՖԻՖԱ-ի Նոր Դասակարգման Աղիւսակին Վրայ 97-րդն Է



Ֆուլբոլի միջազգային ֆետերացիան՝ ՖԻՖԱ-ն, ներկայացուցած է ազգային հաւաքականներու դասակարգման նոր աղիւսակը:

Հայաստանի ֆուլբոլի հաւաքականը նոր աղիւսակին վրայ կը գրաւէ 97-րդ դիրքը: Նախորդ աղիւսակի համեմատ Հայաստանը նահաջած է երկու տեղ:

Լաւագոյն տասնեակին մէջ են Արթենթինը, Ֆրանսան, Պրագիլը, Պելճիքան, Անգլիան, Հոլանտան, Խորուաթիան, Իտալիան, Փորթուկալը եւ Սպանիան:

«Ինթեր»- Զպահպանեց Յաղթական Արդիւնքը Միսիթարեանը Մասնակցեցաւ Խաղին

Իտալիոյ առաջնութեան հերթական համգրուանին «Ինթեր» մրցելով «Սալերնիտանայի» դէմ, հանդիպման 5 վայրկեան առաջ անցաւակազմի չկարողացաւ պաշտպանել առաւելութիւնը: «Սալերնիտանաի» ֆուլբոլիստները յաջողեցան խուսափիլ պարտութենէն: 90-րդ վայրկեանին «Սալերնիտանան» նշանակեց հաւասարութեան կոլը:



Հենրիխ Միսիթարեանը «Ինթերի»-ի հիմնական կազմէն էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Ինթեր» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ մնաց 4-րդ տեղը եւ ունի 51 կէտ:

«Պայրընի» Եւ «Պորուսիայի» Յաղթանակները

Գերմանիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին ախոյեան Միւնխի «Պայրընը» գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորութեամբ հիւրընկալեց «Ֆրայպուրկին» եւ առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով:

«Պայրըն» 58 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Տորթմունթի «Պորուսիայէն», որ 2:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Ունիոն Պեուլինին»:

Երրորդ տեղը գտնուող «Ունիոն Պեուլին» ունի 51 կէտ: